

ԵՐԵՎԱՆԻ ՄԻՆԻՍՏՐ ԶԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

# ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

2014 ԹՎԱԿԱՆ N 12-13 (1306-1307) ՀՈԿՏԵՄԲԵՐ



# ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Երևանի պետական բժշկական համալսարանը «Ընտանեկան բժշկության ակադեմիական միավորում» հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպել էր ընտանեկան բժշկության 2-րդ միջազգային գիտաժողովը՝ նվիրված ԱՄՊ օղակի բժիշկների՝ գործնական աշխատանքում հաճախ հանդիպող առողջական խնդիրներին, հատկա-

վերամասնագիտանային նման մասնագետները: Թե՛ այն տարիներին, թե՛ այսօր դժվար է պատկերացնել՝ ո՞րն է ընդհանուր պրակտիկայի բժշկի իսկական բնութագիրը, և հարցը տեղափոխվեց ակադեմիական դաշտ: Խնդիր էր դրված ստեղծել «Ընտանեկան բժշկություն» նոր ուսուցանական առարկա, ներդնել այն նախադիպումային փուլում, մշակել ծրագրեր բարձրագույն բժշկական կրթության և՛ նախադիպումային, և՛ շարունակական մասնագիտական կրթության փուլերում:

«Ընտանեկան բժշկության ակադեմիական միավորում» հասարակական կազմակերպության համանախագահ, ընտանեկան բժշկության ամբիոնի դոցենտ Մարինա Օհանյանը, կարևորելով գիտաժողովի առանձնահատկությունը, ընդգծեց նպատակը՝ համախմբել ազգությամբ հայ, գործող ընտանեկան բժիշկների՝ աշխարհի տարբեր երկրներից, որոնց մեծամասնությունը մեծ ճանաչում ունեն և պատրաստ են իրենց փորձը փոխանցել մեզ: Այնուհետև նա հակիրճ ներկայացրեց նաև «Ընտանեկան բժշկության ակադեմիա-



պես՝ առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների ժամանակակից մոտեցումներին՝ ախտորոշման, վարման/կառավարման, կանխարգելման և բուժման գործընթացում:

Հանդես գալով ողջույնի խոսքով՝ թերապևտների հայկական ասոցիացիայի տնօրեն, «Ընտանեկան բժշկության ակադեմիական միավորում» հասարակական կազմակերպության համանախագահ, ընտանեկան բժշկության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարինյանը ընդգծեց, որ ընտանեկան բժշկության ներդրումը Հայաստանի առողջապահական համակարգում բարդ գործընթաց էր, քանի որ այդ ընթացքում բավականին խնդիրներ էին ծագում:

«Յուրաքանչյուր մասնագիտություն, որը հաստատվում է, հիմքում անպայման ունենում է որակավորման բնութագիր, այսինքն՝ ի՞նչ պետք է իմանա, ի՞նչ ունակություններով պետք է օժտված լինի այդ մասնագիտության կրողը, տվյալ դեպքում՝ ընտանեկան բժիշկը: Սա առաջին խնդիրն էր, իսկ երկրորդն այն էր, թե ինչպե՞ս պետք է պատրաստվեին կամ

«Բայց այստեղ կարևորվում է այլ խնդիր՝ մեր ԲՈՒՀ-ում կրթությունը տարվում է դիսցիպլինար սկզբունքով, այսինքն՝ ուսանողը, մտնելով կլինիկա, սովորում է ախտորոշել հիվանդությունը՝ գնալով դեպի նոզոլոգիա, և բուժել ու ապաքինել հիվանդին՝ այս կամ այն նոզոլոգիայի դեպքում: Այնինչ՝ կրթությունը պետք է տանել՝ հիմնվելով պրոբլեմի, խնդրի վրա, այսինքն՝ ուսանողը, ապագա ընտանեկան բժիշկը պետք է սովորի կանխարգելել հիվանդությունը: Այսպիսով՝ մեր ուսուցումը պետք է հիմնված լինի պրոբլեմի, հիվանդության կանխարգելման վրա», - կարևորեց Միքայել Նարինյանը, ով գիտաժողովի երկրորդ օրը «ԹԶՕՀ ժամանակակից հարցեր» թեմայով զեկուցման մեջ դարձյալ շեշտադրեց կանխարգելիչ բժշկության և պրոբլեմի վրա հիմնված կրթության անհրաժեշտությունը: Իր գործընկերներին նա խորհուրդ տվեց իրենց գործունեության հիմքում դնել հետազոտական աշխատանքը լուրջ արդյունքների հասնելու համար, որից հետո պատասխանեց մասնակիցների հարցերին:

կան միավորում» ՀԿ-ի անցած ճանապարհը, նրա նպատակները՝ կարևորելով ընտանեկան բժշկության ոլորտում կրթական գործընթացի խթանումը և, հատկապես, շարունակական բժշկական կրթությունը:

Գիտաժողովի մասնակիցներին իր ողջույնը հղեց նաև Մեծ Բրիտանիայի Թագավորության Royal College of General Practitioners-ի ներկայացուցիչ Գևորգ Հոբայեանը, ով ևս կարևորեց նման միջոցառումների անցկացումը և մաղթեց արդյունավետ աշխատանք:

Գիտաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան Հայաստանի առաջատար մասնագետներ, հրավիրված դասախոսներ Մեծ Բրիտանիայից, Շվեդիայից, ԱՄՆ-ից, ինչպես նաև ԱՄՊ օղակի բժիշկներ Երևանից և Հայաստանի մարզերից:

Գիտաժողովի մասնակիցները ստացան 10 CME եվրոպական կրեդիտով վկայագրեր՝ շնորհված Royal College of General Practitioners-ի կողմից:



# ԱՌԱՋԻՆ ԳԾՈՒՄ ԾԱՌԱՅԱԾ ՋԻՆՎՈՐՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՋԵՂՉԵՐ

Երևանի Մ. Զերացու անվան բժշկական համալսարանում կայացած Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստի մասնակցների թվում էր նաև ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Բացման խոսքով հանդես եկավ ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարինյանը: ԲՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության անունից ողջունելով հանդիսական մասնակիցներին և պաշտպանության նախարարին՝ նա նշեց «Հզոր բանակը ազատության, անկախության և զարգացման երաշխիք է: Մեր համագործակցությունը պաշտպանության նախարարության, բանակի հետ ավելի քան 20 տարվա պատմություն ունի, և այս առումով ցանկանում են ընդգծել մեր ԲՈՒՀ-ի գերակա ուղղությունները՝ զարգացնել ռազմական բժշկությունը՝ որպես կրթական առարկա և ապահովել ու ամրապնդել զինծառայողների, նրանց ընտանիքների առողջությունը թե՛ պատերազմի ժամանակ, թե՛ խաղաղ պայմաններում: Մեր ԲՈՒՀ-ի լավագույն ավանդույթներից ելնելով՝ այս ամենը դրվում է գիտական և հետազոտական լուրջ հիմքերի վրա»: Ապա, կարևորելով բժշկական ասոցիացիաների դերը, Մ. Նարինյանը նշեց, որ պլանավորվում է ամրապնդել ԲՈՒՀ-ի կապը զինվորական բժիշկների հայկական ասոցիացիայի հետ՝ հույս հայտնելով, որ ԲՈՒՀ-բանակ արդյունավետ համագործակցությունը դեռ երկար կշարունակվի՝ ի բարօրություն և ի փառս մեր հայրենիքի և ժողովրդի:

ԲՈՒՀ-ի ղեկավարությանը, պրոֆե-

սորադասախոսական կազմին և ուսանողներին ողջունելուց և Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձի կապակցությամբ շնորհավորելուց հետո պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը խոսեց բանակ-հասարակություն կապի մասին՝ կարևորելով դպրոցների և, հատկապես, բարձրագույն ուսումնական հաստատությունների անելիքները այդ կապի ամրապնդման գործում: Նա մեկ անգամ ևս արժևորեց բուժաշխատողի դերը բանակում և ընդգծեց վերջին տարիներին ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի ակնհայտ առաջընթացը:

ՀՀ պաշտպանության նախարարը նիստի մասնակիցներին ներկայացրեց զինված ուժերում ընթացող բարեփոխումները, ձեռքբերումները, խոսեց առաջիկա անելիքների մասին: «2014 թվականը հայտարարված է փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի տարի, և ուրախությամբ ցանկանում են փաստել, որ տարեցտարի զինված ուժերի կառավարման, ռազմակրթական համակարգերը դրվում են առավել բարձր, գիտելիքահեռք մակարդակի վրա, ինչպես նաև լուրջ աշխատանքներ են տարվում մեր սահմանային պաշտպանությունն ավելի անվտանգ դարձնելու, արտակարգ դեպքերն ու պատահարները նվազագույնի հասցնելու ուղղությամբ»: Նախարարը ներկայացրեց ռազմաբժշկական ֆակուլտետի նախկին ուսանողներ, այժմ բանակում իրենց ծառայությունն իրականացնող Հակոբ Շահվերդյանին, Սարգիս Սարգսյանին, Արսեն Բալդյանին և որպես խրախուսանք՝ յուրաքանչյուրին տասնօրյա արձակուրդ տրամադրեց:

Այնուհետև Սեյրան Օհանյանը պատասխանեց ուսանողներին հետաքրքրող հարցերին: Ի թիվս այլ պատասխանների՝ նախարարը տեղեկացրեց, որ առաջին գծում ծառայած զինվորները հետագայում՝ ուսումը շարունակելիս կստա-



ման ուսման վարձի զեղչեր: «Մենք արդեն կրթության և գիտության նախարարության հետ պայմանավորվել ենք, որ առաջին գծում ծառայած զինվորները, մասնավորապես Երևանի պետական բժշկական համալսարանի ուսանողները ստանան արտոնություններ՝ այսինքն նրանց ուսման վարձը զեղչվի: ԿԳՆ-ի համապատասխան պատասխանատուն ասել է, որ զեղչերը գործում են: Միայն պետք է ներկայացնենք ցուցակը, թե ովքեր են առաջին գծում ծառայել», - ասաց նախարարը:

Այնուհետև տեղի ունեցավ պարզեցված արարողություն, որի ընթացքում նախարարը պատվոգրեր, գերատեսչական մեդալներ և արժեքավոր նվերներ հանձնեց ԵՊԲՀ մի խումբ աշխատակիցների և ուսանողների:

Միջոցառման հանդիսավոր մասի ավարտից հետո ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարինյանի և ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից հաստատվեց և գործողության մեջ դրվեց համալսարանի ռազմաբժշկական կրթագիտական կենտրոնի կանոնակարգը:

Նշենք, որ կենտրոնի առաջնահերթ նպատակներն են ՀՀ-ում ռազմաբժշկական կադրերի պատրաստումը և բժշկագիտության զարգացումը ռազմապաշտպանական առողջապահության ոլորտում, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության և ԵՊԲՀ համագործակցության ծրագրերի ընդլայնումն ու խորացումը, զինված ուժերի անձնակազմի առողջապահական խնդիրների ուսումնասիրումը և լուծումը:



# ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆ ԱՅՑԵԼԵՑ «ՄՈՒՐԱՑԱՆ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

**Հ**առողջապահության նախարար Արմեն Մուրադյանն այցելեց Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Մուրացան» հիվանդանոցային համալիր:

Նախարարը ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարինյանյանի, կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Մինասյանի, աշխատակազմի ղեկավար Գագիկ Միրիջանյանի և «Մուրացան» հիվանդանոցի գլխավոր բժիշկ Բագրատ Բավեյանի ուղեկցությամբ շրջեց հիվանդանոցի բերապիայի, մանկաբուժության, էնդոկրինոլոգիայի, թունաբանության, մանկական վերակենդանացման, վնասվածքաբանության և օրթոպեդիայի, դիմածնոտային վիրաբուժության և ԼՕՌ, անեսթեզիոլոգիայի և վերակենդանացման, ֆիզիոթերապիայի և վերականգնողական, քիմիաթերապիայի, խաղաթերապիայի կլինիկաներով, զրուցեց հիվանդների, բաժանմունքների պատասխանատուների հետ, այցելեց հիշողության խանգարման կենտրոն:

Արմեն Մուրադյանին հատկապես ոգևորեց հիվանդանոցում գործող խաղաթերապիայի սենյակում առկա ջերմ մթնոլորտը. «Այստեղ ամեն ինչ այնքան գեղեցիկ և տրամադրող է: Համոզված եմ, որ այս ամենն արդյունավետ է ազդում երեխաների բուժման ընթացքի վրա», - ասաց նախարարը՝ նկատելով, որ երեխաները հանգիստ մթնոլորտում նկարում են: Արմեն Մուրադյանը կենտրոնի հոգեբան Լուսինե Հովհաննիսյանին առաջարկեց երեխաների աշխատանքներից կազմակերպել բարեգործական ցուցահանդես-վաճառք, իսկ ստացված հասույթն ուղղել անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռքբերմանը:



Հիվանդանոցի բակում ԵՊԲՀ կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Մինասյանը նախարարի ուշադրությանը ներկայացրեց նորածնային վերակենդանացման բաժանմունքը սպասարկող ավտոմեքենա, որը միակն է տարածաշրջանում: Հիշեցնենք, որ մեքենան ձեռք էր բերվել «Մխիթար Հերացի» բժշկագիտության զարգացման հիմնադրամի միջոցներով, որի գործադիր տնօրենը ԵՊԲՀ աշխատակազմի ղեկավար Գագիկ Միրիջանյանն է:

Այնուհետև առողջապահության նախարարի ուշադրությանը ներկայացվեց հիվանդանոցի ավտորոշիչ ծառայությունը, որն իրականացնում է կլինիկական, քիմիաթերապիայի, սեռոլոգիական, իմունաբանական, բակտերիոլոգիական և այլ քննություններ:



Արմեն Մուրադյանին տեղեկացրին նաև, որ հիվանդանոցի «Մուրացան» պոլիկլինիկական սպասարկում է 11.000-ից ավելի 0-18 տարեկան երեխաների և շուրջ 3.000 մեծահասակների: Նախարարի ուշադրությունը հրավիրվեց նաև պոլիկլինիկայի կազմում գործող բժշկական գենետիկայի հանրապետական կենտրոնի վրա, որը զբաղվում է ժառանգական և մետաբոլիկ հիվանդությունների ավտորոշմամբ և բուժմամբ: Այստեղ իրականացվում է նաև ֆենիլկետոնուրիայով տառապող երեխաների սկրինինգ և հետագա հսկողություն:

Նախարարին ներկայացվեց հիվանդանոցի օդափոխության և ավտոնոմ էլեկտրասնուցման համակարգը, ինչպես նաև՝ թթվածնի կայանը:

Քանի որ «Մուրացան» համալսարանական հիվանդանոցը ԵՊԲՀ ամբիոնների կլինիկական բազան է, ուսումնական մասում նախարարը հանդիպեց և զրուցեց ուսանողների հետ՝ հետաքրքրվելով, թե մասնագիտական ինչ կողմնորոշում ունեն: Նրան ուրախացրեց այն հանգամանքը, որ ուսանողների մեծ մասն արդեն կողմնորոշվել է իր մասնագիտության ընտրության հարցում: Նախարարը լսարանում հանդիպեց նաև ԵՊԲՀ-ում սովորող հնդիկ ուսանողներին:

Այցի ավարտին Արմեն Մուրադյանը շնորհակալություն հայտնեց ԲՈՒՀ-ի և հիվանդանոցի ղեկավարությանը՝ աշխատանքները պատշաճ ու որակով կազմակերպելու համար և հավաստիացրեց, որ կփորձի հնարավորինս աջակցել առկա խնդիրների լուծման հարցում:



# THE RA HEALTH MINISTER VISITS “MOURATSAN” UNIVERSITY HOSPITAL

“Mouratsan” University Hospital was visited by Armen Mouradyan, the RA Health Minister.

Together with YSMU Rector Michael Narimanyan, YSMU Vice-Rector on Clinical Affairs Armen Minasyan and the Hospital Chief Doctor, the Minister made a tour to the clinics of Therapy, Pediatrics, Endocrinology, Toxicology and Pediatric Reanimation, Traumatology and Orthopedy, Maxillofacial Surgery and ENT, Anesthesiology and Rehabilitation, Chemotherapy, Play Therapy, talked to the patients and department responsible staff, and visited the Memory Disorder Center.

Armen Mouradyan was especially amazed by the warm atmosphere of the Play Therapy room. He said: “Here everything is so nice. I am sure that all this has an effective impact on the treatment process of children”. He offered the Center psychologist Lousineh Hovhannisyan to organize a charity exhibition-sale of the children’s works, and the income be used to obtain necessary medical equipment. According to him it will promote the children to be kind and careful towards other people.



Later the diagnostic service of the Hospital was presented for the Minister’s attention which conducts clinical, biochemical, serologic, immune, bacteriological and other examinations.

The Minister was also informed that the “Mouratsan” polyclinic serves more than 11.000 children aged 0-18 and around 3300 adult population.



Armen Minasyan introduced the Minister a car serving the neonatal reanimation Department; the car is the only one in the region. Worth mentioning that the car was obtained by the means of “Mkhitar Heratsi” Medical Science Development Fund the director of which is YSMU Head of Staff Gagik Miridjanyan.



There is also the Republican Center for Medical Genetics functioning within the Polyclinic; the Center deals with diagnosis and treatment of hereditary and metabolic diseases. The Center also conducts screening of phenylketonuria and further control.

Since the “Mouratsan” University Hospital is the clinical base for YSMU departments there are also lessons organized. The Minister spoke to the students and wondered what kind of professional orientation they have. He was also amazed at the fact that the majority of students has already chosen their future profession. The Minister also met YSMU Indian students.

The Minister was also introduced to the Hospital’s ventilation and automatic power supply system and the oxygen plant.

At the end of the visit Armen Mouradyan extended his gratitude to the University and Hospital management for the proper organization of the works, and ensured that he will do his best to support them solving current issues.



## ՄԵՐ ՀՅՈՒՐՆ Է ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒՅԺ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՇԱՔԱՐՅԱՆԸ



Օրերս Երևանի Մ.Յերացու անվան պետական բժշկական համալսարանի «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի ակնաբուժական կլինիկայի համար ԵՊԲՀ-ի կողմից գնվեց ֆակոէմուլսիֆիկացիայի վիրահատության համար նախատեսված նորագույն սարքավորում: Այս, ինչպես նաև այլ հարցերի շուրջ զրուցեցինք ակնաբուժական կլինիկայի ղեկավար, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր մանկական ակնաբույժ, պրոֆեսոր Արմեն Շաքարյանի հետ:

**- Ես տեղյակ եմ, որ դուք ունեք նորություն տեխնիկական վերազինման ուղղությամբ: Մի քանի խոսք այդ մասին:**

- Այո, դուք իրավացի եք: Վերջերս Երևանի Մ. Յերացու անվան պետական բժշկական համալսարանի ուժերով գնվեց ժամանակակից սարք՝ ֆակոէմուլսիֆիկացիայի համար. խոսքը գնում է բնածին և տարիքային կատարակտների ուլտրաձայնային եղանակով հեռացման տեխնոլոգիայի մասին՝ կիրառելով այսօրվա համաշխարհային բժշկության լավագույն պարագաները, որոնք օգտագործվում են այդ վիրահատության ժամանակ: Բոլոր պարագաները, գործիքները և սարքավորումը շվեյցարական «Alcon» լավագույն ֆիրմայի արտադրանքն են: Այդ սարքավորումը հնարավորություն է տալիս ավելի ակտիվ, արագ և ավելի անվտանգ կատարել գործողությունները, մասնավորապես, առանց աչքին կարեր տեղադրելու, որը շատ կարևոր է հատկապես մանկական

վիրահատությունների դեպքում: Հիվանդը այդ վիրահատությունից մի քանի ժամ հետո կարող է անցնել իր սովորական առօրյային և կարիք չի ունենում երկարատև հաճախումների բժշկին: Ի դեպ՝ կար դնելը, ինքնուտիներյան, առաջացնում է, այսպես կոչված, եղջերաթաղանթային աստիգմատիզմ՝ այն կարերի պատճառով, որոնք ձգում են եղջերաթաղանթը՝ առաջացնելով աչքում լույսի բեկման տարբեր անկանոն շեղումներ: Քանի որ կատարակտները, ոսպնյակների պղտորումները համարվում են ամենից հաճախ հանդիպող վիրահատական միջամտությունները ակնաբուժության մեջ, ապա պարզ է դառնում, որ բժշկական համալսարանը համալսարանական կլինիկայի աշխատակիցներին և մեր հաճախորդներին մեծ նվեր է արել՝ ծախսելով բավականին մեծ գումար և ձեռք բերելով այդ սարքավորումը: Այն կօգտագործվի հիվանդներին ավելի բարձր մակարդակով սպասարկելու նպատակով:

**- Ի՞նչ նոր կառուցվածքային փոփոխություններ կան կլինիկայում:**

- Մեր կլինիկայում տեղակայված է Երևանի Մ. Յերացու անվան պետական բժշկական համալսարանի հետդիպլոմային և շարունակական կրթության ֆակուլտետի մանկական ակնաբուժության ամբիոնը, որը կազմավորվել է 2011 թվականին՝ «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի ակնաբուժական կլինիկայի բազայի վրա՝ ԳՀԿ-ի մանկական ակնաբուժական գիտահետազոտական լաբորատորիայի աշխատակիցների ուժերով: Այստեղ տարբեր թեմաներով վերապատրաստման դասընթացներ են անցնում մանկական ակնաբուժության ուղղությամբ:

Միևնույն ժամանակ մենք մասամբ զբաղվում ենք նաև նախադիպլոմային կրթությամբ: Մասնավորապես, աչ-



քի հիվանդություններին վերաբերող դասընթացի որոշ մասեր, որոնք նվիրված են մանկական ակնաբուժությանը, անցկացվում են մեր ամբիոնում:

Պետք է նշեմ, որ դա մանկական ակնաբուժության առաջին ամբիոնն է Հայաստանում: Նման ամբիոններ վաղուց արդեն կան և՛ Ռուսաստանում, և՛ ԱՊՀ մյուս երկրներում, և՛ արտասահմանում՝ որտեղ և ժամանակին ձևավորվել են հայրենական ակնաբուժության մի շարք առաջատար մասնագետներ:

Կլինիկայի հիվանդանոցային մահճակալների թիվը 16-ն է: Այստեղ գործում են ժամանակակից վիրասրահ, վիրակապարան, ֆունկցիոնալ ախտորոշման, բարդ եղանակներով տեսողության շտկման, կոնտակտային ոսպնյակների ընտրման, աչքի պաթոլոգիաների լազերային եղանակով շտկման, համակարգչային բուժման, ամբուլատոր խորհրդատվական ընդունելության և ուսումնական ժամանակակից առանձնասենյակներ: Միևնույն ժամանակ մեր կլինիկան հանդիսանում է առաջատարը նմանատիպ բուժաստատությունների շարքում, որոնք զբաղվում են երեխաների տեսողության պահպանմամբ և նրանց մոտ ավելի հաճախ հանդիպող մի շարք հիվանդությունների բուժմամբ: Տարեկան շուրջ





10.000 և ավելի հիվանդներ ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից՝ ստանում են բարձրորակ մասնագիտացված բուժօգնություն կոնսերվատիվ և վիրահատական եղանակներով: Ինչ վերաբերում է կադրային փոփոխություններին՝ ասեն, որ հիմնական փոփոխությունը լինում է այն ժամանակ, երբ լավ գիտելիքներ և աշխատելու ցանկություն դրսևորող կլինիկական օրդինատորներ են լինում: Մենք դիմում ենք բժշկական համալսարանի ղեկավարությանը այդ անձանց մեր կլինիկայում աշխատանքի մեջ ներգրավելու համար: Միևնույն ժամանակ՝ վերջերս մենք հրավիրել ենք ճանաչված վիրաբույժ Անդրեյ Յովհաննեսի Ամիրխանյանին, ով կմասնակցի հատկապես նոր սարքավորումով վիրահատական միջամտություններ կատարելուն՝ մեր բժիշկների հետ միասին:

**- Ձեր կլինիկական մանկական ակնաբուժական կլինիկա է, սակայն դուք ընդունում եք նաև մեծահասակների: Այդ դեպքում մանկական ակնաբուժության մեջ հմտացած ձեր մասնագետները որքանո՞վ կկարողանան իրականացնել մեծահասակների աչքի հիվանդությունների բուժումը:**

- Մեր կլինիկական վաղուց ունի տարբեր ուղղվածություններ՝ սպասարկում ենք և՛ երեխաներին, և՛ մեծահասակներին: Մեծահասակներին հիմնականում սպասարկում ենք գլաուկոմայի և կատարակտի բուժման նպատակով: Իսկ մասնագետներն արդեն տարբեր են, քանի որ դրանք տարբեր մասնագիտություններ են:

**- Ո՞ր թվականին է ձեր կլինիկական կառուցվել, արդյո՞ք այն համընկնում է «Չերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի կառուցման տարեթվին:**

- Ոչ, չի համընկնում, քանի որ մեր կլինիկական կառուցվել է 1928-29 թվա-

կաններին բազմաճանաչ բարեգործ և մեծ հայասեր Պողոս Նուբարյանի կողմից հատկացված գումարների շնորհիվ՝ ի հիշատակ իր տիկնոջը: Սովետական Միության փլուզումից հետո մենք դիմեցինք մեր կառավարությանը և խնդրեցինք վերականգնել կլինիկայի սկզբնական անունը՝ Պողոս Նուբարի կնոջ՝ Մարի Նուբարի անունով: Այդ անվանումը՝ «Մարի-Նուբարի» ակնաբուժական կլինիկա՝ ԵՊԲՀ ակնաբուժարանը կրում է և այսօր:

**- Առկա՞ է այսօր կապը հիվանդանոցի հիմնադիրների ժառանգների հետ:**

- Գործնականում շարունակվում է, ճիշտ է՝ ոչ այդքան հաճախ: Նրանք տարիներ առաջ հյուրընկալվել են մեզ մոտ, տրամադրել են Պողոս Նուբարին նվիրված որոշ պատմական լուսանկարներ: Մենք կցանկանալինք ավելի ակտիվ կապեր ունենալ և համագործակցել նրանց հետ, սակայն, անշուշտ, և ոչ մի պարագայում չլինել խնդրողի դերում:

**- Ո՞րն է այն հարցը, որը մտահոգում է ձեզ, որի մասին կցանկանալիք բարձրաձայնել «Ապագա բժշկի» էջերում:**

- Եթե դա վերաբերում է բժշկությանը, ապա կարծում եմ, որ այսօր մեր բժշկությունը պարտադիր, ընդհանուր և պետական մակարդակով տրվող բժշկական ապահովագրության խիստ կարիք ունի: Ապահովագրման հարցի նախնական փուլերի վրա պետք է անպայման աշխատեն մասնագետները, համենայնդեպս՝ ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր մասնագետները, ովքեր ճիշտ կգնահատեն այն ծախսերի ծավալը, որը կատարում է այսօրվա բժշկությունը հիվանդներին բուժելու ընթացքում: Ներկայումս պետպատ-

վերի ֆինանսական հնարավորությունները դեռ զիջում են կատարվելիք ծախսերին: Նշեն, որ եթե երևանի պետական բժշկական համալսարանը չլիներ մեր հովանավորը, բուժհիմնարկը դժվարությամբ կկարողանար ծածկել այդ ծախսերը և ապահովել ժամանակակից առողջապահական պահանջներին համապատասխանող բարձր մակարդակը: Մասնավոր բուժհիմնարկները սահմանափակվում են այսօր հիմնականում վճարվի հիմունքներով ցուցաբերվող բուժօգնությամբ: Իսկ համալսարանական հիվանդանոցը հետապնդում է հենց այն նպատակը, որպեսզի ազգաբնակչությանը ապահովի անվճար բուժօգնությամբ՝ անկախ վերջիններիս ֆինանսական կարողություններից: Ամբողջ աշխարհում ընդունված է, որ համալսարանական հիվանդանոցներն աշխատում են անվճար հիմունքներով: Բացի այդ՝ առողջապահական համապատասխան մարմինները պետք է քիչ թե շատ ապահովեն այն ծախսերը, որոնք այսօրվա բժշկությունը, հատկապես մեր համալսարանում, կատարում է պետպատվերի սահմաններում: Իմ կարծիքով՝ առաջնահերթ խնդիր է հենց պետական բժշկական պարտադիր և 100 տոկոսանոց ապահովագրումը: Դա հնարավորություն կտա ավելի ժամանակակից ձևերով շարժվել առաջ, քանի որ ցանկացած հարցի հիմքը կազմում են ֆինանսական հնարավորությունները. չի կարելի կառուցել կապիտալիզմ ամբողջ պետությունում, իսկ բժշկությունը թողնել սոցիալիզմի մեջ:

**- Համաձայն են, շնորհակալություն չափազանց հետաքրքիր հարցազրույցի համար:**

ԱՌՊԱ ՀԱԿՈՒՅԱՆ

# «ԿՈՉՈՒՄՈՎ ԲԺԻՇԿ»

## ê² ðàðÊ² ÛÛ² ÛÛ° ð



**ՅՅ առողջապահության նախարարի նախածնունդյան «Կոչունով բժիշկ» նախագծի երկրորդ անդրադարձը նվիրված է Սարուխանյանների բժշկական ընտանիքին:**

Սարուխանյանների բժշկական մեծ գերդաստանի առաջին ներկայացուցիչը Վազգեն Սարուխանյանն է: Այս տոհմի արմատները Նոր Բայազետից են: Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Վազգեն Սարուխանյանը ծնվել է Գավառում:

«Յայրս լավ դպրոց է ստեղծել, իր գիտելիքները փոխանցել և բժշկական բարդ ոլորտ գործուղել շատ ու շատ պրոֆեսիոնալների: Ես ծնվել եմ բժիշկների ընտանիքում: Մայրս, որ նույնպես բժիշկ էր, ծնվել էր Ստեփանավանում: Ես և քույրս ընտրել ենք մեր ծնողների մասնագիտությունը: Քույրս՝ Կարինեն, բժշկական գիտությունների թեկնածու է, մասնագիտությամբ՝ անեսթեզիոլոգ: Նրա դուստրը և տղան ևս բժշկական գիտությունների թեկնածու են: Կինս՝ Սվետլանա Սարուխանյանը, ընտանեկան բժիշկ էր», - իրենց ընտանիքի բժշկական հարուստ կենսագրությունը ներկայացնելով՝ պատմում է Վազգեն Սարուխանյանի որդին, ՅՅ առողջապահության նախարարության վիրաբուժության գլխավոր մասնագետ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վիրաբուժական կլինիկայի ղեկավար, ՅՅ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Յովհաննես Սարուխանյանը:

Յովհաննես Վազգենի Սարուխանյանն անվանի բժշկական ընտանիքի երկրորդ սերնդի ամենավառ ներկայացուցիչն է: Ծնվել է 1938-ի մարտի 25-ին, Երևանում: Խոստովանում է, որ իր առաջին ուսուցիչն իր հայրն է եղել:

«Քանի որ հայրս վիրաբույժ էր, խորացա այդ մասնագիտության մեջ և «սիրահարվեցի վիրաբուժությանը»: Աշխատում էի տոպոգրաֆիկ ամատոմիայի և օպերատիվ վիրաբուժության ամբիոնում, որտեղ էլ հարստացրի իմ փորձնական գիտելիքները», - ասում է Յովհաննես Սարուխանյանը, ով 1955-61թթ. ուսանել է Երևանի բժշկական ինստիտուտի բուժկանխարգելիչ ֆակուլտետում:

1961-63 թթ. անցել է կլինիկական օրդինատուրա՝ ՅՅ գիտությունների ազգային ակադեմիայի սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտի վիրաբուժական բաժանմունքում: 1963-88թթ. ԽՍՀՄ առողջապահության նախարարության Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտի թորակալ վիրաբուժության և անեսթեզիոլոգիայի ամբիոնում անցել է կրտսեր գիտաշխատողից մինչև ամբիոնի պրոֆեսորի վաստակաշատ ուղին: 1965-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1969-ին՝ դոկտորական թեզեր: 1988-ից մինչ օրս ղեկավարում է Մ. Յեթացու անվան ԵՊԲԳ-ի վիրաբուժության թիվ 3 ամբիոնը, ԲՈՒԳ-ի ընդհանուր բժշկության ֆակուլտետի, գիտական մեծ խորհրդի և վիրաբուժության մասնագիտական խորհրդի անդամ է, 1987-ից՝ վիրաբույժների հայկական ասոցիացիայի, 2000-ից՝ հայկական վիրաբուժության 21 պրոֆեսիոնալների միության նախագահը: Յովհաննես Սարուխանյանի ավելի քան 200 գիտական աշխատություններում, 13 ուսումնամեթոդական ձեռնարկներում, 4 մենագրություններում, 8 ռացիոնալիզատորական առաջարկներում, 9 գյուտերում, նաև նրա անմիջական ղեկավարությամբ պաշտպանած 6 դոկտորական և 21 թեկնածուական ատենախոսություններում ընդհանրացված են սրտանոթային, կրծքային, ստամոքսաղիքային, ենթաստամոքսագեղձի, էնդոկրին հիվանդությունների, երկարատև ճնշման համախտանիշի, սթրեսի, վնասվածքների էնդոտրոֆիկոզի տեսությունն ու գործառնությունը: Նախկին Խորհրդային Միությունում պրոֆեսոր Սարուխանյանն առաջինն է մշակել զույգ թոքերի միանվագ տրանսպլանտացիայի մոդել, կատարել խղիղոխիթիթիազի ժամանակ արտամարմնային հարվածող աղիքային լիտոտրիպսիա: Յայաստանում առաջինն է կատարել պանկրեատոդուոդենալ մասնահատում՝ ենթաստամոքսագեղձի գլխիկի ուռուցքի և կեղծ ուռուցքային պանկրեատիտների ժամանակ, լյարդի ձախ բլթի մասնահատում՝ լյարդ-բջջային քաղցկեղի ժամանակ, աջ բրոնխի մասնահատում՝ ալյաստիկայով՝ թոքի քաղցկեղի ժամանակ, վիրահատություններ որովայնի խոռոչի էկտոպիկ ֆեոքրոմոցիտոմայի, հարվահամաձև գեղձի աղեղնոմայի, ինսուլինոմայի կապակցությամբ: Յովհաննես Սարուխանյանը մշակել է շատ այլ վիրահատությունների նոր մեթոդներ, որոնք ճանաչվել են որպես գյուտեր: Նա ուրախու-



թամբ նկատում է, որ վերջին կես դարում Հայաստանում բժշկությունը զգալի առաջընթաց է գրանցել բոլոր ասպարեզներում:

«Կորոնար անոթների վիրաբուժական եղանակը շատ է զարգացել: Այսօր կատարվում են այնպիսի վիրահատություններ, որոնք 25 տարի առաջ չէին արվում՝ և՛ սրտի, և՛ անհետաձգելի: Այսօր շատ են խոսում եվրոպական, ամերիկյան կլինիկաների մասին, սակայն պետք է ասեն, որ Հայաստանում վիրահատությունների 75 տոկոսը կատարվում է անհետաձգելի վիրաբուժական օգնություն ցուցաբերելու ժամանակ: Կարող են մշել, որ շատ ցածր է մահացությունը: Մեր երկրում բարձր մակարդակի վրա են սրտի վիրահատությունները, կարդիոստիմուլյատորների տեղադրումը, ստենտավորումը: Սուր ինֆարկտների դեպքում դրանք ամենօրյա աշխատանք են»,-ասում է Հովհաննես Սարուխանյանը: Վաստակաշատ գիտնականն ու բժիշկն արժանացել է «Առողջապահության գերագանցիկ» և «Գյուտարար ռացիոնալիզատոր» կոչումների:

Նա պարզևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով, «Մխիթար Հերացի», «Մարշալ Բաղրամյան» մեդալներով, արժանացել ՀՀ առողջապահության նախարարության «Ոսկե մեդալի», ՀՀ կառավարության շնորհակալագրի ու պատվոգրի:

2013-ի մարտի 27-ին Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ամբիոնի վարիչ Հովհաննես Սարուխանյանի ծննդյան 75 և աշխատանքային գործունեության 50-ամյակին նվիրված գիտական խորհրդի հատուկ նիստի ընթացքում Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը բժշկագիտության զարգացման գործում ունեցած ակնառու վաստակի, առողջապահության բնագավառում ներդրած նշանակալի ավանդի, ինչպես նաև աշխատանքային գործունեության ընթացքում ցուցաբերած անմնացորդ նվիրումի համար Հովհաննես Սարուխանյանին պարգևատրեց «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով: Հանրապետության նախագահը Հովհաննես Սարուխանյանին հանձնելով պետական բարձր պարգևը՝ շնորհավորեց և հաջողություններ մաղթեց անվանի գիտնականին ու վիրաբույժին, ուն ամուլը նախագահի խոսքով՝ երախտագիտությամբ են հիշում նրա հիվանդները, սաները, ուսանողները,

բոլոր նրանք, ովքեր կարողացել են ջանասիրությամբ յուրացնել վաստակաշատ գիտնականի տված գիտելիքները, դառնալ լավ, պիտանի մասնագետներ: Սարուխանյանների բժշկական երրորդ ճյուղը շարունակում են Հովհաննես Սարուխանյանի և նրա քրոջ զավակները, ովքեր ևս ընտրել են բժշկի բարդ ու պատասխանատու գործը:

Ավագ որդին՝ Վազգեն Սարուխանյանը, ստոմատոլոգ է, զբաղվում է պրակտիկ բժշկությամբ, իսկ կրտսեր որդին՝ մանկաբույժ Հովհաննեսը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է: Նա Ռուսաստանի Դաշնության բժշկական գիտությունների ակադեմիայի անհետաձգելի մանկական վիրաբուժության և վնասվածքաբանության գիտահետազոտական ինստիտուտի տնօրենն է, ազգային բժշկական պալատի նախագահը, անվանի մանկաբույժ, պրոֆեսոր Լեոնիդ Ռոշալի տեղակալը: Հովհաննես Սարուխանյան կրտսերն արդեն մոտ երկու տասնամյակ է, ինչ բնակվում է Մոսկվայում, սակայն առիթը բաց չի թողնում տարին մի քանի անգամ հայրենիքում լինելու: Հայ գործընկերների հետ մշտապես պահպանելով կապը՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ մասնագիտական ձեռնարկներ է հրապարակում՝ այդ թվում՝ հայերենով:

Փորձառու մանկաբույժը խոստովանում է, որ ինչպես շատ բժշկական ընտանիքներում՝ ինքն ու եղբայրը նույնպես, կարծես այլընտրանք չունենալով, բժիշկ դառնալու որոշումը կայացրել են ինքնաբերաբար, բայց՝ գիտակցված:

«Երբ իմերորդ դասարանում էի սովորում, մտածելով մասնագիտության ընտրության մասին, դիտարկում էի նաև իրավաբանի մասնագիտությունը, սակայն հետագայում տեսնելով հորս աշխատանքը, թե ինչպես է նա այցելում հիվանդանոց, զգալով այդ բժշկական մթնոլորտը՝ ես էլ որոշեցի բժիշկ դառնալ»,- հիշում է Հովհաննես Սարուխանյան կրտսերը: Բժշկի աշխատանքը, նրա զնահատմամբ՝ բարդ է և միաժամանակ պատասխանատու, քանի որ անմիջականորեն առչվում է մարդկանց կյանքի հետ:

Անդրադառնալով 1988-ին Սպիտակի աղետալի երկրաշարժի ժամանակ Հայաստանին մեծագույն օգնություն ցույց տված հանրահայտ մանկաբույժ, մարդասեր Լեոնիդ Ռոշալի հետ աշխատանքին՝ Սարուխանյանը նշում է, որ իր ավագ գործընկերոջից առաջին հերթին սովորել է լինել արհեստավարժ և յուրաքանչյուր իրավիճակում անել առավելագույնը՝ հիվանդների կյանքի փրկության համար:

«Շատ կարևոր է, որ մասնագիտությունը դիտարկես ոչ թե սոսկ գործ, աշ-

խատանք, այլ ամեն ինչ անես անմնացորդ նվիրումով և սիրով,-անկեղծաբանում է մանկաբույժը՝ պատմելով, որ իրենք տարեկան մոտ 20 հազար հիվանդի անհետաձգելի բժշկական օգնություն են ցուցաբերում:

Սարուխանյանների երրորդ սերնդի ներկայացուցչի համոզմամբ՝ թեպետ հասարակության մեջ բժշկի դերը բարձրացնելու կարիք կա, այնուամենայնիվ, բոլոր ժամանակներում շատերը ճիշտ են ընկալել բժշկի դերը: Հիմա էլ հիմնականում մեծ հարգանք և գնահատանք կա բուժաշխատողի բարդագույն աշխատանքի հանդեպ:

Մոսկվայաբնակ մասնագետն ուրախությամբ է փաստում, որ անգամ հայրենիքից հեռու, Ռուսաստանում բնակվող և տարբեր ոլորտներում աշխատող բժիշկներին հաջողվել է պահպանել կապը միմյանց հետ, կիսվել գաղափարներով, համատեղ միջոցառումներ իրականացնել:

Հովհաննես Սարուխանյան կրտսերի երեխաները բժիշկի մասնագիտությունը չեն ընտրել և հենց այդ է պատճառը, որ նրա մեծագույն ցանկությունն է, որ առաջիկայում թոռները դառնան Սարուխանյանների բժշկական գերդաստանի արժանի շարունակողները:

Ուրախությամբ պետք է մշենք, որ անվանի գիտնականն ու բժիշկ Հովհաննես Վազգենի Սարուխանյանն այսօր էլ ակտիվ գործունեություն է ծավալում՝ ի նպաստ մեր երկրում առողջապահական համակարգի զարգացման և սերունդների դաստիարակման գործի: Նրա ջանքերի շնորհիվ շատերն իրենց երկրորդ կյանքն են ապրում: Անվանի վիրաբույժն այն համոզմանն է, որ բժշկի մասնագիտությունն ընտրած յուրաքանչյուր ոք պետք է խորությամբ ուսումնասիրի բժշկագիտությունը: Պրոֆեսոր Սարուխանյանը մինչև հիմա էլ տարեկան 150-200 վիրահատություն է կատարում:

Հետադարձ հայացք նետելով անցած ուղուն՝ վիրաբույժը վստահեցնում է, որ բժշկի մասնագիտությունն Աստծո պարգև է: «Ամենաթանկն առողջությունն է, որի վերականգնման, խնդիրների հաղթահարման առումով, եթե կարողանում ես օգնել հիվանդին, ապա բժշկի համար դրանից մեծ երջանկություն չկա: Ուրախ եմ, որ երեք տասնյակից ավելի գիտության թեկնածուներ և դոկտորներ են պատրաստել: Նրանք հիմա ղեկավարում են բժշկական ամբիոններ, համակարգի տարբեր ստորաբաժանումներ, շատերն ավագ վիրաբույժներ են, ճանաչված մարդիկ, դա ինձ համար մեծ ուրախություն է»:



# ՃԱՆԱԶԵՆՔ ՄԵՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Սիրելի առաջին կուրսեցի, Երևանի պետական բժշկական համալսարանի անվանական կրթաթոշակառուների մասին նյութերը քեզ նվիրված թողարկման մեջ տեղադրելն ամենակին պատահական չէ: Մեր թղթակից Աիդա Հակոբյանի առաջադրած հարցերին նրանց պատասխանները կօգնեն քեզ ուսումնառության ընթացքում ունենալ գործողության հստակ ծրագիր, և կաշխատես ընդօրինակել նրանց:

## ԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Մխիթար Հերացու անվան կրթաթոշակառու



1. Պատմիր մի փոքր քո մասին, ո՞ր ֆակուլտետից ես և ու՞մ անվան կրթաթոշակ ես ստանում:

2. Ի՞նչ գիտես այն մարդու մասին, ում անվան կրթաթոշակն ես ստանում:

3. Որպես երիտասարդ սերնդի ներկայացուցիչ՝ ի՞նչ խնդիրների մասին ես ցանկանում խոսել: Ի՞նչ խորհուրդներ կցանկանայիր տալ քո սերնդակիցներին:

4. Գերազանց սովորելուն զուգահեռ զբաղվո՞ւմ ես հասարակական գործունեությամբ:

5. Իսկ քո կարծիքով արժե՞ր անքուն գիշերներ անցկացնել անվանական կրթաթոշակ ստանալու համար:

Գերազանցությամբ ավարտել եմ Հակոբ Օշականի անվան թիվ 172 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել եմ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան: Սովորում եմ ընդհանուր բժշկության ֆակուլտետում և ստանում եմ Մխիթար Հերացու անվան կրթաթոշակ: Ընտրել եմ օֆթալմոլոգի մասնագիտությունը:

Մխիթար Հերացին միջնադարյան հայ բժշկության հիմնադիրն է, կիլիկյան բժշկական դպրոցի նորարար, որի ավանդները հետագայում շարունակեցին անվանի բժիշկները: Բժշկապետի դերը շատ բարձր է գնահատվել համաշխարհային բժշկության ու բնագիտության մեջ: Հերացու «Ձերմանց մխիթարությունը» երկար դարեր լավագույն ձեռնարկ-դասագիրքն է եղել հայ բժիշկների և բժշկություն սովորողների համար: Մեծ բժշկապետի ստեղծած շատ տերմիններ դեռ այսօր էլ գործածվում են հայ բժշկագիտության մեջ:

Ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ մեր երկրում կան խնդիրներ, որոնք լուծելի են: Ինձ անհանգստացնող է մտածել, որ երբեք չենք կարողանումք լուծել այն խնդիրները, որոնք մեր հայրերը և նախնիները լուծել են:

տացնող խնդիրներից մեկն այն է, որ երիտասարդները նախընտրում են արտասահմանյան կյանքն ու ուսումը, այնինչ մեր բարձրագույն ուսումնական հաստատություններում կարելի է ստանալ բարձրակարգ և բազմակողմանի ուսում: Խորհուրդ կտամ իմ սերնդակիցներին սիրել հայրենիքը, մասնակցել նրա զարգացմանը, լինել ձգտող և ընդունել ավագ սերնդի խորհուրդները:

Ժամանակ առ ժամանակ մասնակցում եմ տարբեր հասարակական միջոցառումների, բայց գտնում եմ՝ պետք է ավելի ակտիվ մասնակցություն ունենալ:

Անվանական կրթաթոշակ ստանալու համար ես անքուն գիշերներ չեմ անցկացրել: Իմ ուսման տարիները ուղղված են եղել հիմնարար գիտելիքներ ստանալուն:

## ՄՆԻԹՈՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԸ ՏՐԿՈՒՄ Է ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՑ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻՆ

Կիլիկյան Հայաստանի բժշկական դպրոցի հիմնադիրն է եղել Մխիթար Հերացին: Հանձարեղ հայ բժշկապետը նույն դերն է կատարել մեզանում, ինչ Հիպոկրատը՝ հին հունական, Գալենը՝ հռոմեական, Իբն Սինան՝ արաբական բժշկության համար: Նա հավաքել և ուսումնասիրել է Հայաստանի ժողովրդական և դասական բժշկության դարավոր փորձը՝ անդրադառնալով նաև անտիկ, արաբ ու պարսիկ հեղինակների գործերին: Իր «Ձերմանց մխիթարությունը» (1184թ.) գրքում, որը նվիրված է տեղաշարժվող հիվանդությունների պատճառագիտության, ախտաբանության, կլինիկական դասակարգման ու բուժման հարցերին, Մեծն Մխիթարը առաջ է քաշել կենդանի հարուցիչի կամ բորբոսի գաղափարը, որը նա տարածել է նաև քաղցկեղի պատճառագիտության վրա:

Նրա երկերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե 12-րդ դարում որքան բարձր մակարդակի էր հասել բժշկությունը Հայաստանում: Պատահական չէ, որ խոշոր արևելագետ ու բժշկապատմաբան Էռնստ Ջայդերը, ով 1908-ին գերմաներեն փայլուն թարգմանեց «Ձերմանց մխիթարությունը»՝ արժանանալով Փուշմանի մրցանակի, հետևյալ բարձր գնահատականն է տվել Հերացու գրքին. «Երբ մենք, օրինակ, առանց կանխակալության համեմատենք Հիլդեգարդայի «Ֆիզիկան», որ գրվել է մի քանի տասնամյակ առաջ, մեր հայ վարպետի ստեղծագործության հետ, ապա ստիպված կլինենք առաջնության դասին վճռականապես շնորհել վերջինիս՝ բնությունը հիմնավորապես ճանաչելու, հետևողական և ինքնուրույն մտածողության և սխոլաստիկ լծից կատարելապես զերծ լինելու համար»:



## Աիդա Հարությունյան Վահան Արծրունու անվան կրթաթոշակառու

Ավարտելով Երևանի Պուշկինի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցը 2010-ին՝ ընդունվեցի Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան՝ իմ երազանքի կրթօջախը: Լինելով ստեղծագործ անձնավորություն՝ 2-րդ կուրսից ընդգրկվեցի ուսանողական գիտական ընկերության աշխատանքներում: ՈւԳԸ-ն իմ մեջ արթնացրեց անսահման հետաքրքրություն դեպի գիտությունը: 2012-ին կենսաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր Կ. Ենկոյանի առաջարկությամբ ամբողջությամբ խորասուզվեցի «Աուտիզմի» գիտափորձերի մեջ: Ներկայումս կրթության և գիտության նախարարության թեմատիկ ֆինանսավորման և ANSEF (Armenian National Science and Education Fund)՝ Հայաստանի ազգային գիտության և կրթության հիմնադրամի ծրագրերի շրջանակներում երիտասարդ գիտա-հետազոտող եմ և պարզապես երջանիկ մարդ, քանի որ աշխատում եմ ԱՊՀ երկրների ամենաերիտասարդ պրոֆեսոր, բացառիկ անձնավորության՝ պրոֆ. Կ. Ենկոյանի ղեկավարությամբ:

2013-ին IFMSA ծրագրի օժանդակությամբ ամառային պրակտիկական անցել եմ Գերմանիայի Վիլհելմի համալսարանական կլինիկայում: Սույն թվականի ամռանը, ստանալով DAAD կրթաթոշակ, հաճախել եմ Հայդելբերգի համալսարանի ամառային

դպրոց: Տիրապետում եմ ռուսերեն, անգլերեն, գերմաներեն լեզուներին:

Սովորում եմ ընդհանուր բժշկության ֆակուլտետում, ընտրել եմ թերապևտի մասնագիտությունը: Ստանում եմ Վ. Արծրունու անվան կրթաթոշակ:

Ինձ համար մեծ պատիվ է բ.գ.դ., պրոֆ. Վահան Արծրունու անվան կրթաթոշակակիր լինելը և միևնույն ժամանակ՝ պարտավորեցնող: Վ. Արծրունին ՀԽՍՀ վաստակավոր գործիչ է, ԵՊԲՀ նորմալ անատոմիայի ամբիոնի հիմնադիրը, քիթ-կոկորդ-ականջաբան, հիգիենիստ:

Ինչպես ամենուր, այնպես էլ կրթական ոլորտում խնդիրները բազմաթիվ են, բայց իմ կարծիքով այդ ամենը չպետք է անդրադառնա բժշկի ինքնակատարելագործման վրա: Կրթությունը տալիս է մարդուն արժանապատվություն, ինչու՞ չէ, նաև՝ կյանքի մեծ փորձ:

Սիրելի սկսնակներ, համակուրսեցիներ, սերնդակիցներ, ինքնակատարելագործվեք, աշխատեք երբեք չհուսահատվել և փորձեք հաղթահարել կյանքի դժվարությունները: Ինչպես գերմանացի մեծ մտածող Գյոթեն է ասել. «Ոչ մի փորձ վտանգավոր չէ, եթե այնքան խիզախ ես այն անել»:

Տարիներ շարունակ մասնակցել եմ ուսանողական խորհրդարանի կողմից կազմակերպված հասարակական աշխատանքներին: Ներկայիս զբաղվածությունը թույլ չի տալիս ակտիվորեն մասնակցելու համալսարանի հասարակական կյանքին:

## Ալեքսանդր Ներսեսյան Լևոն Հովհաննիսյանի անվան կրթաթոշակառու

Օնվել եմ Սանկտ-Պետերբուրգում: Երբ 5 տարեկան էի, ընտանիքով տեղափոխվեցինք Երևան: Ավարտել եմ Մայակովսկու անվան թիվ 7 միջնակարգ դպրոցը ոսկե մեդալով: Սովորում եմ 5-րդ կուրսում՝ ընդհանուր բժշկության ֆակուլտետում: Ընտրել եմ էնդոկրինոլոգի մասնագիտությունը: Ստանում եմ Լևոն Հովհաննիսյանի անվան կրթաթոշակ:

Նա Սովետական Միության տարիներին հայտնի սրտաբան էր, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՍՍՀՄ ԲԳԱ-ի ակադեմիկոս:

Երիտասարդ ուսանողների համար ամենակարևոր խնդիրներից մեկը լավ աշխատանք գտնելն է:

Մենք շատ ենք սովորում, որ լավ մասնագետ դառնանք, և դա կարևոր ու գլխավոր պայմանն է, որ կկարողանաս հացի համար գումար վաստակել: Ցավոք՝ շատ են դեպքերը, երբ լավ մասնագետը չի կարողանում այստեղ՝ իր հայրենիքում աշխատանք գտնել և ստիպված մեկնում է արտասահման: Բայց դա պորբլեմի լուծում չէ: Այդ իրավիճակը ոչ միայն բժշկության բնագավառում է, այլ նաև՝ ցանկացած ոլորտում: Բացի այդ՝ կան ուսանողներ, ովքեր ժամանակ չունեն սովորելու, քանի որ ստիպված են փող վաստակել ու ընտանիք պահել...

Իսկ թե ինչպիսին է լինելու մեր ապագան՝ ամեն դեպքում՝ հուսով եմ, որ ապագայում վիճակը կփոխվի...

Խորհուրդների վերաբերյալ կարող եմ ասել, որ մենք պետք է ձգտենք լավ մասնագետ դառնալ, պետք է պահպանենք բարոյական արժեքները, սիրենք մեր հայրենիքը:




Իմ սիրելի դպրոցի կարգախոսը, որն արդեն դարձել է իմ կարգախոսը.

Да здравствуют музы,  
Да здравствует разум!  
О, сколько нам открытий чудных  
Готовит просвещенья дух...

А. С. Пушкин

Անքուն գիշերներ անցկացնելով՝ սովորել, հարստացնել ինտելեկտը, ընդլայնել աշխարհայացքը: Այս ամենի գլխավոր նպատակը ապագայում հիվանդներիս օգնության ձեռք մեկնելն է: Մարդասիրություն, ահա ինչն է առաջնայինը բժշկի մասնագիտության մեջ: Ցանկանում եմ երախտագիտությունս հայտնել ԵՊԲՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ ի դեմս ադմինիստրացիայի, աշխատանքս գնահատելու համար:



Ոչ, հասարակական աշխատանքով տվյալ պահին չեմ զբաղվում:

Իհարկե, դա մեծ ջանքեր խլեց ինձանից, բայց ինձ թվում է, որ արժեք...

## ՀՌԻՓՍԻՄԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Ռուբեն Յոլյանի անվան կրթաթոշակառու

Սովորում եմ ընդհանուր բժշկության ֆակուլտետում, 5-րդ կուրսում: Ընտրել եմ նյարդավիրաբույժի մասնագիտությունը: Այս տարի արժանացել եմ Ռուբեն Յոլյանի անվան կրթաթոշակին:

Ռուբեն Յոլյանը եղել է պրոֆեսոր, վիրաբույժ, համալսարանական վիրաբուժության ամբիոնի վարիչ: Մինչ կրթաթոշակին արժանանալը շատ քիչ բան գիտեի պրոֆեսոր Ռ. Յոլյանի մասին, բայց այժմ շատ հողվածներ եմ կարդում նրա ծավալած գործունեության վերաբերյալ: Հուսով եմ, որ ապագայում գոնե որոշ չափով կնմանվեմ մեծ վիրաբույժին:

Խնդիրները, ցավոք, շատ են: Իմ կարծիքով բժշկությունն այն ոլորտն է, որտեղ խնդիրներն անպակաս են, որտեղ չի կարելի բավարարվել եղածով ու միշտ պետք է ձգտել ավելիին: Որպես ուսանող՝ կցանկանայի ուշադրություն հրավիրել հատկապես այն փաստի վրա, որ ուսանող-հիվանդ շփումը միմյանից է մեր ուսման ընթացքում, ինչը, ըստ իս, այս պահի ամենակարևոր խնդիրն է:

## ՄԻԼԵՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ

Լևոն Հովհաննիսյանի անվան կրթաթոշակառու

Կարոցական տարիներին ունենալով գերազանց առաջադիմություն՝ մշտապես ձգտել եմ լինել լավագույնը ու երբեք չեմ բավարարվել այն ամենով, ինչին հասել եմ: Մասնակցել եմ բազմաթիվ օլիմպիադաների: Դեռ վաղ տարիներից ինձ միշտ զրավել է բժշկի մասնագիտությունը, և հասակակիցներիցս տարբերվել եմ նրանով, որ տիկնիկներիս հետ խաղալու փոխարեն սկսում էի բուժել նրանց ատամները ու թաքուն երազում էի, որ երբ մեծանամ, մի օր անպայման կիրազորեմ երազանքս: Ծնողներս դեմ էին դրան և հույս ունեին, որ տարիքի հետ կփոխեմ որոշումս, բայց ես վճռական էի տրամադրված ու հասկանում էի, որ նպատակներիս հասնելու համար անհրաժեշտ է միայն աշխատասիրություն և հավատ՝ ինքս իմ նկատմամբ: Այժմ սովորում եմ ստոմատոլոգիական ֆակուլտետի 4-րդ կուրսում, անչափ սիրում եմ իմ մասնագիտությունը՝ օրթոդոնտիան, և այս տարիների ընթացքում այնքան հարազատ դարձած համալսարանս: Ստանում եմ Լևոն Հովհաննիսյանի անվան կրթաթոշակ:

Լևոն Հովհաննիսյանը եղել է ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի և Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր, պրոֆեսոր, Երևանի համալսարանի բժշկական ֆակուլտետի կազմակերպիչներից: Նա հիմնադրել է բժշկական ֆակուլտետի ներքին հիվանդությունների ամբիոնը և ղեկավարել այն մոտ 5 տասնամյակ:

Հարթ չի եղել այն ճանապարհը, որով անցել եմ, խորապես շնորհակալ եմ այն մարդկանց, ովքեր սրտա-

Ապագա գործընկերներիս կցանկանայի խորհուրդ տալ, երբեք չվախենալ երազանքներից և ուշադրություն չդարձնել շրջապատի դժկամ մարդկանց ասածներին: Բժշկական համալսարան ընդունվելիս շատերն էին ցանկանում ինձ հետ պահել՝ պնդելով, որ այդ ուղին ինձ համար չափից ավելի բարդ է, բայց միևնույնն է՝ ընդունվեցի և արդեն ավարտական կուրսում եմ: Ինչպես հիմա շատերը փորձում են հետ պահել նյարդային վիրաբույժ դառնալու մտքից, բայց, իմ կարծիքով, կարևորը սերն է ու ցանկությունը: Այստեղ տեղին է իմ սիրած արտահայտությունը: «Кто хочет, тот ищет возможности, кто не хочет ищет причины».

Այո, զբաղվում եմ հասարակական աշխատանքով, այն էլ շատ ակտիվ կերպով: Ուժերս փորձում եմ հնարավորինս շատ ոլորտներում: Ունեմ բազմաթիվ հետաքրքրություններ, որոնք օգնում են հանգստանալ ուսման ծանրաբեռնված պրոցեսի ժամանակ:

Անկեղծ ասած՝ երբեք դասերի պատճառով անքուն գիշերներ չեմ անցկացրել և այս տարիների ընթացքում երբևէ չեմ մտածել, որ կարող եմ արժանանալ անվանական կրթա-



թոշակի: Սովորել եմ հաճույքով, քանի որ շատ եմ սիրում ընտրածս մասնագիտությունը, և առաջնահերթը ինձ համար եղել է գիտելիք ստանալ ցանկացած աղբյուրից՝ լավ մասնագետ դառնալու համար: Բայց ուսման ընթացքում ինձ երբեք չեմ զրկել հանգստից ու իմ սիրած այլ զբաղմունքներից (նկարչություն, լուսանկարչություն, երաժշտություն, պար, արշավներ): Միշտ փորձել եմ համատեղել դրանք, և քիչ թե շատ ստացվել է: Ասեմ, որ ինձ համար անսպասելիորեն, դառնալով թեկնածու, այժմ արդեն՝ կրթաթոշակառու, ավելի մեծ հուզմունք ապրեցի՝ կրկին համոզվելով, որ ճիշտ ընտրություն եմ կատարել:

ցավորեն օգնել եմ ձեռք բերել գիտելիքներ, անմնացորդ նվիրվելով ուսանողին՝ ինձ համար պահպանել եմ իսկական դասախոսի կերպարը: Շնորհակալ եմ նաև ընկերներիս, ովքեր անկեղծորեն ուրախացել են իմ հաջողություններով:

Սերնդակիցներիս խորհուրդ կտայի լինել ավելի համարձակ սեփական մտքերի իրազորման մեջ, չվախենալ տարբերվել, առաջինը լինել՝ փոխելու համար գուցե չնչին մի բան դեպի լավը, երբեք չզոհել մարդկային հատկանիշերը նպատակների իրազորման ճանապարհին և փորձել պահպանել քեզ այնպիսին, ինչպիսին որ կաս՝ չվախենալով լինել չզգնահատված: Պետք չէ ոչինչ հետաձգել սովորելու հետ կապված, քանի որ այն, ինչ ստանում ես կաթիլ-կաթիլ, մնում է քեզ հետ ամբողջ կյանքի ընթացքում: Նաև կցանկանայի, որ փոխվեր այն կարծրատիպը, թե ստոմատոլոգիան լուրջ վերաբերմունք չի պահանջում: Ցանկացած մասնագիտություն, որն առնչվում է մարդու առողջությանը, պահանջում է խոր գիտելիքներ:

Իմ անքուն գիշերները սկսվել են դեռ դպրոցական հասակից՝ տարրական դասարանից: Մշտապես ոգևորվել եմ հաղթահարելուց այն դժվարությունները, որոնք այդ պահին ինձ անհաղթահարելի են թվացել: Ինձ համար երբևէ գերնպատակ չի եղել ստանալ որևէ կրթաթոշակ, պարզապես փորձել եմ անել առավելագույնը՝ լավ բժիշկ դառնալու ճանապարհին:



## ՄԱՐԻԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Գրիգոր Արեշյանի անվան կրթաթոշակառու

Սովորում եմ ընդհանուր բժշկության ֆակուլտետի հինգերորդ կուրսում: Ապագայում պատրաստվում եմ ընտրել բժշկագիտության ճառագայթային ախտորոշում ճյուղը: Պատիվ ունեմ ստանալու Գրիգոր Արեշյանի անվան կրթաթոշակ:

Գրիգոր Յակոբի Արեշյանը ծնվել է Թբիլիսիում: 1909-ին ավարտել է Կիևի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Աշխատել է մանկաբարձ-գինեկոլոգ Կիևում և Թբիլիսիում: 1919-ին, գալով Երևան, ստեղծում է առաջին մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը, հետագայում այնտեղ ստեղծում է մանկաբարձների դպրոց: 1925-ին ստեղծում է մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնը Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում և Երևանի բժշկական ինստիտուտում, որը ղեկավարել է մինչև 1952 թվականը: Նրա անունով է կոչվել Երևանի մանկաբարձագինեկոլոգիական առաջին կլինիկան: Ծավալած գիտական գործունեության ոլորտը եղել է մա-

լարիայի ազդեցության ուսումնասիրությունը հղիության, ծննդաբերության և հետծննդաբերական շրջաններում: Գիտական աշխատանքը նվիրված է եղել «Հղիությունը և մալարիան» թեմային: Եղել է բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ի կարծիքով ժամանակակից երիտասարդների խնդիրներից մեկը չափից ավելի շատ վիրտուալ կյանքով ապրելը և իրական կյանքից կտրվելն է: Կցանկանայի, որ իմ սերնդակիցները լինեն ավելի նպատակաուղղված և նպատակասլաց, քայլեն ժամանակին համընթաց՝ հասարակության լիիրավ անդամ կոչվելու համար:

Այո, զբաղվում եմ, քանի որ հասարակական կյանքով զբաղվելը կարևոր է մի քանի պատճառներով. մարդը հասարակական էակ է, և առանց հասարակական կյանքի դժվար է պատկերացնել յուրաքանչյուրիս զարգացումը և որպես անհատականություն ձևավորումը: Բժշկական համալսարանի ուսանողներիս համար մարդկանց հետ շփումը, տարբեր բնավորությունների ու նախասիրությունների հետ բախումը հնարավորություն են ընձեռում գաղափար կազմելու մարդու հոգեկան



աշխարհի մասին և ապագայում օգնում մեզ բուժել ոչ միայն մարմինը, այլև՝ հոգին:

Լավ մասնագետ դառնալու, հիվանդներին ժամանակին և ճիշտ բժշկական օգնություն ցույց տալու համար, իմ կարծիքով, պետք է երբեմն հրաժարվել նաև քնից, և քանի որ անվանական կրթաթոշակը արտացոլում է վերը նշվածի ուղղությամբ մեր չորս տարիների ընթացքում կատարած աշխատանքը, ապա՝ այո, արժեր:

## ԱՆԻ ՄԻԽԱՅԵԼՅԱՆ

Բարդուղիմեոս Ֆանարջյանի անվան կրթաթոշակառու

Վարտելով Սիսիանի թիվ 2 միջնակարգ դպրոցը գերազանցության մեդալով՝ ընդունվեցի ԵՊԲՀ: Այժմ սովորում եմ ընդհանուր բժշկության ֆակուլտետում: Սիրում եմ ստեղծագործել: Ընկերներին կարծիքով՝ շատ անմիջական եմ և կյանքով լեցուն: Շատ եմ սիրում երեխաներին և չի բացառվում, որ ապագա մասնագիտությունս լինի մանկական նյարդաբանությունը: Երեխաներին օգնելը ինձ համար այս կյանքում գերագույն նպատակ է: Ստանում եմ Բ. Ֆանարջյանի անվան կրթաթոշակ:

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բարդուղիմեոս Ֆանարջյանը եղել է ՀԽՍՀ ռենտգենաբանության և ուռուցքաբանության հիմնադիրը: Նրա աշխատանքները վերաբերվում են ստամոքսի, աղիների, շնչառական և ոսկրային համակարգի հիվանդությունների ռենտգեն ախտորոշմանը, ինչպես նաև՝ չարորակ ուռուցքների բուժմանը: Ես հպարտ եմ, որ ստանում եմ նրա անվան կրթաթոշակ:

Մեծ ցավ եմ ապրում տեսնելով դատարկվող մեր գյուղերը: Կցանկանայի գոնե կիսով չափ պակասեր արտագաղթը, բոլորը աշխատանքով ապահովված լինեին: Ինձ հուզող հարցերից է նաև արբորտը և մանկատներում երեխաների թվի աճը: Շատ կցանկանայի Հայաստանում փողոցով քայլելիս տեսնել ոչ թե տխուր դեմքեր, այլ միայն ջերմ ժպիտներ: Իսկ իմ սերնդակիցներին խորհուրդ եմ տալիս լինել ազնիվ, բարի և աստվածավախ, քանի որ միայն

այդ դեպքում կգտնեն իրենց ճշմարիտ ուղին: Ճիշտ է՝ գիտելիքը շատ կարևոր է, բայց միևնույն է՝ մարդկային արժեքները առաջնային են:

Ցավոք, ժամանակի սղության պատճառով այդքան էլ ակտիվ հասարակական կյանք չեմ վարում: Համենայնդեպս՝ փորձում եմ գոնե հետ չմնալ ընկերներիս հետ ազատ ժամանակ անցկացնելուց և միջոցառումներին մասնակցելուց:

Ի հարկե, շատ մեծ զգացողություններ ես ունենում, երբ գնահատվում է քո արած աշխատանքը: Սակայն, եթե անկեղծամամ, ես միայն 4-րդ կուրսի վերջում իմացա կրթաթոշակի մասին: Բայց արժե անքուն գիշերներ անցկացնել աստվածային մասնագիտություն ըմբռնելու և սովորելու համար: Ինձ համար ամենակարևորը մարդկային կյանքն է, իսկ բժշկի անփութությունը, սխալը և անտարբերությունը աններելի երևույթներ են: Մենք պարտավոր ենք օգնություն ցույց տալ՝ չխնայելով ոչինչ, իսկ դրա համար պետք է ունենանք լավ գիտելիք, որը, որքան էլ սովորում ես, այնքան անավարտ է թվում:



## ԱՆԻ ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

Լևոն Օրբելու անվան  
կրթաթոշակառու

Դեռ դպրոցական հասակից հետաքրքրված եմ եղել քիմիայով, ֆիզիկայով և մասնակցել եմ հանրապետական օլիմպիադաների: Ավարտել եմ Հակոբ Օշականի անվան միջնակարգ դպրոցը ոսկե մեդալով: 2009-ին սովորել եմ Լոնդոնի EF լեզվի մասնագիտացված դպրոցում: 2010-ին ընդունվել եմ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան և այժմ սովորում եմ ընդհանուր բժշկության ֆակուլտետի 5-րդ կուրսում: Մասնակցել եմ տարբեր գիտական կոնֆերանսների, IFMSA ծրագրի շրջանակներում անցել եմ արտադրական պրակտիկա Բրազիլիայում: Ընտրել եմ անեսթեզիոլոգի մասնագիտությունը: Այս 5 տարիների ընթացքում էլ ավելի եմ համոզվել, որ ճիշտ եմ կողմնորոշվել՝ մասնագիտության ընտրության հարցում և երբեք չեմ զղջա իմ որոշման համար: Ինձ համար մեծ պատիվ է ստանալ Լևոն Օրբելու անվան կրթաթոշակ, որը միևնույն ժամանակ շատ պարտավորեցնող է:

Կարծում եմ՝ քիչ մարդիկ կգտնվեն, որ տեղյակ չլինեն Օրբելի եղբայրների մասին: Նրանցից Լևոնը՝ հայ ֆիզիոլոգ, էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ուսմունքի ստեղծողներից է հանդիսանում: Լևոն Օրբելու աշխատանքները համաշխարհային ճանաչում ունեն: Օրբելի-Գինեցինսկու երևույթի հայտնաբերմամբ ստեղծվեց նոր տեսություն՝ սինպսիկ նյարդային համակարգի հարմարողական-սնուցողական ֆունկցիայի մասին: Լ. Օրբելին ստեղծել է ֆիզիո-

լոգիայի ամենաընդարձակ դպրոցներից մեկը:

Ըստ իս՝ երիտասարդությունը բոլոր ժամանակներում նույնն է եղել, ինչ որ հիմա: Ավագներն էլ իրենց հերթին միշտ դժգոհ են եղել նրանցից: Նույնիսկ Սոկրատեսը իր աշխատություններից մեկում բողոքում է երիտասարդությունից՝ ասելով. «Մեր ժամանակների երիտասարդությունը ահավոր է, մեծին հարգել չգիտեն, մեծը մտնում է սենյակ, ոտքի չեն ելնում, բարև չեն տալիս...»:

Կարծում եմ՝ այս 2400 տարվա ընթացքում շատ բան չի փոխվել, և մեր խնդիրները՝ նույնպես: Այսօր՝ 21-րդ դարում, երբ կա մրցակցություն կյանքի բոլոր ասպարեզներում, կարծում եմ՝ երիտասարդներիս անհրաժեշտ է առաջին հերթին ստանալ որակյալ կրթություն: Հարկավոր է տասնապատիկ անգամ բազմապատկել այս ուղղության վրա ծախսվող միջոցները: Մեզ բարձրակարգ մասնագետներ են հարկավոր: Ես իրատես եմ և հասկանում եմ, որ ուսանողների մի մասը կմնա արտերկրում, բայց համոզված եմ, որ շատերը կվերադառնան: Արդյունքում մենք կունենանք ավելի ղեմնկրատ համակարգում թրծված անկաշառ ազատների նոր, արարող սերունդ:

Կրթաթոշակ ստանալուց հետո ես փորձում եմ էլ ավելի ճիշտ ու հուսալի օգտագործել ժամանակս՝ թե՛ նոր գիտելիքներ ձեռք բերելու, և թե՛ հասարակական կյանքին մասնակցելու համար: Այժմ, որպես կամավոր, մասնակցում եմ շտապ



օգնության ծառայության աշխատանքներին, որը, ինձ համար մեծ դպրոց է՝ մասնագիտական փորձ ձեռք բերելու համար:

Կարծում եմ՝ այդ անքուն գիշերները իմ բարեկեցիկ ապագայի համար են: Այդ օրերին հնարավոր է մի փոքր տրտմուքացել եմ, բայց երբ տեսնում ես քո տանջանքի արդյունքը, երբ տեսնում ես, որ գնահատված ես, էլ ի՞նչը կարող է դրանից ավելին լինել:

Վերջում ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել մեր ԲՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմին: Հավատացե՛ք, եթե չլինեին նրանք, եթե մեզ այդքան ուժ ու եռանդ չփոխանցեին, հազիվ թե արժանանայինք անվանական կրթաթոշակ ստանալու պատվին:

Շնորհակալ եմ նաև «Ապագա բժշկին» մեզ համար այս հիշարժան իրադարձությունը լուսաբանելու համար:

## ԼԵՎՈՆ ՕՐԲԵԼԻ

Օրբելու աշխատանքները հիմնարար ներդրում են ֆիզիոլոգիայի տարբեր բաժինների զարգացման գործում և ունեն համաշխարհային ճանաչում: Նա, լինելով ֆիզիոլոգիայում էվոլյուցիոն ուղղության հիմնադիրը, ձևակերպել է այդ ուղղության մեթոդներն ու խնդիրները, որոնք պարզաբանում են կենդանի օրգանիզմների ֆունկցիաների զարգացման ողջ պատմությունը: Օրբելու մշակած էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի սկզբունքները, որպես հզոր հետազոտական միջոց, լայնորեն կիրառվում են ժամանակակից հետազոտություններում: Օրբելին լայն հետազոտություններ է կատարել ստորջրյա և ավիացիոն ֆիզիոլոգիայի բնագավառներում, որոնք անմիջականորեն

կապվում էին ոչ միայն տեսական, այլև գործնական, այդ թվում նաև ռազմական խնդիրների հետ: Օրբելին բազմաթիվ կարևոր ընդհանրացումներ է կատարել բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիայի բնագավառում: Նրա ղեկավարությամբ հիմնարար հետազոտություններ են կատարվել զգայարանների ֆիզիոլոգիայի, հարմարվողականության պրոցեսների, աֆերենտ համակարգերի փոխներգործությունների բնագավառներում և այլն: Նա կարևոր ավանդ ունի Հայաստանում ֆիզիոլոգիայի զարգացման գործում: Նրա անունով է կոչվում ՀՀ ԳԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը:



# ԵՊԲՅ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԱՐԺԱՆԱՑԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ

Արտանց շնորհավորում ենք մեր գործընկերներին՝ ստացած  
պատվո թարձր պարգևների կապակցությամբ և մաղթում  
մասնագիտական նորանոր հաջողություններ

Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձի կապակցությամբ ՀՀ նախագահի հրամանագրերով գիտության, տնտեսության, առողջապահության, մշակույթի ոլորտների, ինչպես նաև սփյուռքի մի խումբ ներկայացուցիչներ, դատական համակարգի, հայոց բանակի, ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ոստիկանության համակարգի աշխատակիցներ պարգևատրվել են պետական բարձրագույն պարգևներով: Նույն առիթով շնորհվել են նաև պատվավոր կոչումներ:

Պատվավոր կոչումների են արժանացել նաև երևանի Մ.Հերացու անվան

պետական բժշկական համալսարանի 4 աշխատակիցներ: Հայաստանի Հանրապետության անկախության տոնի առթիվ, ինչպես նաև առողջապահության բնագավառում և բժշկագիտության զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար վիրաբուժության թիվ 4 ամբիոնի վարիչ, «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի վիրաբուժական կլինիկայի ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուլեդ Միսակի Միրիջանյանին, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր միկրովիրաբույժ, պլաստիկ վիրաբուժության ամբիոնի վարիչ, բժշկական գիտու-

թյունների թեկնածու, դոցենտ Արտավազդ Բագրատի Սահակյանին, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի մանկական արտաբան, բժշկական գիտությունների թեկնածու Հովհաննես Գևորգի Ջոիրայանին շնորհվել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր բժշկի պատվավոր կոչում, իսկ մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Արտաշեսի Բեգլարյանին շնորհվել է Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

## ՊԱՏՎՈ ԲԱՐՁՐ ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի առաջատար մասնագետներին շքանշանների հանձնման հանդիսավոր արարողություն:

Հայրենամյակի ու ազգագուտ ծառայության, ինչպես նաև գիտական և առողջապահական ոլորտում ունեցած ձեռքբերումների համար Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան շնորհվեց հայտնի բժիշկ-դեղագետ, հանրապետության դեղաբանության դպրոցի հիմնադիր, մանկավարժ և հասարակական գործիչ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, ԵՊԲՅ նախկին ռեկտոր, այժմ՝ ԵՊԲՅ ռեկտորի խորհրդական, ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, միջազգային

ակադեմիկոսների և գիտական ընկերությունների պատվավոր անդամ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիլեն Պարույրի Հակոբյանին:

ԵՊԲՅ հետբուհական և շարունակական կրթության ուղուցքաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ առողջապահության նախարարության Վ.Ֆանարջյանի անվան ուղուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն, ՀՀ գլխավոր ուղուցքաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայրապետ Միքայելի Գալստյանը և ԵՊԲՅ մանկական վիրաբուժության ամբիոնի վարիչ, ՀՀ ազգային ժողովի առողջապահության, սոցիալական և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Սահնի Բաբլոյանը պարգևատրվեցին «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշաններով:

Բարի գալուստ, առաջին կուրսեցի:

Բժշկական համալսարանը քո առջև բացել է իր շքանույթը:  
Ներս մտիր այն վճռականությամբ, որ ուսումնառության փարիները  
դարձնես գիտելիքների ամբարման ժամանակահատված:  
Խնամքով վարվիր այն ամենի հետ, ինչը կտրվի քեզ  
համալսարանի լսարաններում, լաբորատորիաներում, կլինիկաներում...

Միրելի առաջին կուրսեցի, ահա և դու բժշկական համալսարանի ուսանող ես:

Ուսանողական առաջին օրդ սկսվեց համալսարանի ղեկավարության, համապատասխան  
ղեկանապետների ներկայացուցիչների, դասախոսներիդ հետ հանդիպմամբ, ովքեր  
շնորհավորեցին քեզ, բացաբություններ փնտրեցին համալսարանում գործող կարգի  
մասին, ներկայացրին իրենց պահանջները, նաև՝ քո պարտականությունները:

Նամոզված եմ՝ առաջին օրը միանգամից ամեն ինչ չընկալեցիր:

Վստահ եմ, որ դու հետագայում նույնպես առիթներ կունենաս ղեկանապետներից  
և ամբիոններից իմանալու քեզ հուզող բազում հարցերի պատասխանները:

Ես առաջարկում եմ իմ օգնությունը՝ հնարավորինս քեզ ներկայացնել այն  
հարցերի պատասխանները, որոնք չափազանց կարևոր են, որոնց դու պետք է  
տեղյակ լինես ուսումնառությանդ առաջին ինկ օրերից, այլապես հետագայում

կարող ես բարդություններ ունենալ:

Այս հրահանգ-որոշումներում երբեմն

փոփոխություններ են կատարվում: Նախնական ծանոթությունից հետո քեզ հուզող  
կնճռոտ հարցերի պատասխանները առավել մանրամասնությամբ կարող ես ճշգրտել

համապատասխան ղեկանապետ կամ համալսարանի

ուսումնամեթոդական վարչությունում:

«ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ»

Սիրելի՛ ուսանողներ, առաջին կուրսեցիներ, շնորհավորում եմ ձեզ նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ: Կատարվեց ձեր նվիրական երազանքը: Դուք ընդունվեցիք չափազանց հեղինակավոր մի ուսումնական հաստատություն, որը կոչվում է Մխիթար Չերաքու անվան Երևանի պետական բժշկական համալսարան: Նոր ուսումնական տարվա սկիզբը մեծ նշանակություն կարող է ունենալ ձեր հետագա գործունեության՝ որպես մարդ, անհատ և մասնագետ ձևավորվելու առումով: Միգուցե ձեր ուսումնառության առաջին օրերին շատ են լինելու անսովոր ու անծանոթ հանգամանքներ: Ի նկատի ունենալով, որ որոշ հարցերի չինացությունը կարող է ճակատագրական դառնալ՝ ես որոշեցի հենց սկզբից հնարավորինս տեղեկացնել ձեզ:



Սիրելի՛ ուսանողներ, դուք համալսարան ոտք եք դրել նոր գիտելիքներ ստանալու և լավ մասնագետ դառնալու հավակնությամբ: Ես ինձ վրա եմ վերցնում ձեր լավագույն և մերձավոր բարեկամը դառնալու պարտականությունը և վստահեցնում, որ յուրաքանչյուր այցելություն իմ խմբագրակազմին ձեզ համար կդառնա շահավետ: Մեր բարեկամությունից կշահենք երկուստեք՝ և՛ ես, և՛ դուք:

Այնպես որ՝ բարո՛վ եք եկել, իմ նոր ընթերցողներ, հատուկ ձեզ համար է այս թողարկման նյութերի մեծ մասը:

Թույլ տվեք ներկայանալ՝ «ԱՊՊԱԿԱ ԲԺԻՇԿ»: Անունն անգամ հստակ հուշում է, թե ով է լինելու գլխավոր ընթերցողս: Խոստանում եմ ուսանողական տարիներին ձեզ հետ լինել՝ աշխատելով որքան հնարավոր է օգտակար լինել ձեզ: Կներկայացնեմ համալսարանական այն որոշումները, որոնք կկողմնորոշեն ձեզ, կջանամ իմ թողարկումների հերոսներ դարձնել այնպիսիներին, ում օրինակը կարող է ոգևորել՝ որպես բժիշկ ու դեղագետ կայացման ձեր տևական ճանապարհին մի հատվածում, որ ուսումնառության տարիներ անունն է կրում: Այսօր այդ տարիները ձեզ թվում են չափազանց երկար ժամանակահատված:

Մինչդեռ, եթե հիմք ընդունենք յուրաքանչյուր տարեվերջին իմ էջերում տպագրվող մայր կրթօջախին հասցեագրված շրջանավարտներին հրաժեշտի հուզումնառատ խոսքերը՝ ուսանողական տարիներն ակնթարթի տևողություն ունեն: Հիմա սա անհավանական է թվում ձեզ: Բայց կգա օրը, և ես այս մասին կհիշեցնեմ: Իսկ այդ օրը կլինի հուզիչ, գեղեցիկ ապրումներով, սպասելիքներով լի՝ ապագայի հանդեպ, որին արդեն այնքան մոտ եք լինելու, մեծ հավատով առլեցուն...

Բայց, սպասիր, ես մոռացա ամենակարևորը: Այս ամենի համար հարկավոր է լինելու աննշան մի մանրուք, որի մասին, ինձ թվում է՝ հիշեցում պետք չէ: Դուք լավ գիտեք, որ եկել եք սովորելու: Ուրեմն՝ ՍՈՎՈՐԵԼ, ՍՈՎՈՐԵԼ, ՍՈՎՈՐԵԼ...

Մաղթում եմ ձեզ դառնալ այնպիսի ուսանողներ, ում համար համալսարանի պաշտոնաթերթի էջերում տեղ կգտնվի: Հավատա, դա շատ պատվաբեր է: Դրանում կհամոզվեք ինքներդ, երբ անուններդ հայտնվի ուսման գերազանցիկների, խորհրդարանականների, հասարակական ակտիվությամբ աչքի ընկածներից լավագույնների ցուցակում: Ձեր անձնական արխիվում երկա՛ր տարիներ պահպանելու եք իմ այն թողարկումը, որի էջերում ձեր մասին հոդված կլինի: Եվ ես ու դուք հավերժ բարեկամներ կմնանք:

Կարծում եմ՝ ծանոթությունը ստացվեց: Մնում է սպասել իմ ու ձեր առաջին հանդիպմանը, որին ես սպասում եմ մեծ անհամբերությամբ՝ լաբորատոր մասնաշենքի 4-րդ հարկում՝ «ԱՊՊԱԿԱ ԲԺԻՇԿ» թերթի խմբագրությունում:

**«ԱՊՊԱԿԱ ԲԺԻՇԿ»**  
այսօրվանից նաև ձեր լավագույն  
բարեկամն ու խորհրդատուն



# ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ, ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ, ՕՐԳԻՆԱՏՈՒՐԱ...

## Ուսումնական գործընթաց

Երևանի պետական բժշկական համալսարանում գործում է ուսման երկաստիճան համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա:

Բակալավրիատի ընթացքում ուսանողը ստանում է բժշկական բազային գիտելիքներ: Բակալավրիատի տևողությունը բոլոր ֆակուլտետների համար 4 տարի է:

Մագիստրատուրայի տևողությունն ընդհանուր բժշկության և ռազմաբժշկական ֆակուլտետներում 2-ական տարի է, իսկ ստոմատոլոգիական և դեղագիտական ֆակուլտետներում՝ 1-ական տարի:

Ընդհանուր բժշկության ֆակուլտետի բակա-



լավրիատի քառամյա ծրագրի ավարտից հետո ուսումը հնարավոր է շարունակել մագիստրատուրայում հետևյալ ուղղություններով՝ բուժական գործ և հանրային առողջություն:

Մագիստրատուրան ավարտելուց հետո կլինիկական օրդինատուրայի առաջին կուրսում իրականացվում է մեկ տարի տևողությամբ ընդհանուր ուսուցում, որից հետո անցնում են մեկ մասնագիտական ուսուցում՝ ըստ ընտրված մասնագիտության (օրինակ՝ սրտաբանություն, ակնաբուժություն և այլն):

Օրդինատուրայի տևողությունը պայմանավորված է ընտրված մասնագիտությամբ:

## ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄՏՈՒԳԱՐՔՆԵՐ

### Ձախակողմյան ստուգարք

Պասսավանդվող մի քանի առարկաներից (դրանք նշված են դասացուցակում) ուսանողը պետք է հանձնի ստուգարքներ, դրանք նշանակվում են տեղեկագրում և ստուգարքի գրքուկի ձախ կողմում:

Իր նշանակությամբ այն հավասարազոր է քննության: Ձախակողմյան ստուգարքի նպատակն է ուսանողի գիտելիքների ստուգումը: Նշանակվում է այն դեպքում, երբ ուսանողը ստացել է այդ առարկայի աջակողմյան ստուգարքը, հաճախել է դասախոսություններին կամ լրացրել է բաց թողած դասաժամերը (լրացման կարգը որոշում է ամբիոնը) և կիսամյակի ընթացքում ընթացիկ հարցումից(ներից) ստացել է առնվազն բավարար գնահատական(ներ):



### Աջակողմյան ստուգարք

Ուսումնական կիսամյակի ավարտին, իսկ բարձր կուրսերում՝ ցիկլային պարապմունքներից հետո, ստուգարքի գրքուկի աջ կողմում նշանակվում է ստուգարք:

Աջակողմյան ստուգարքը՝ ուսանողի լեզվով ասած՝ կատարողականը, նշանակվում է բոլոր այն դեպքերում, երբ ուսանողը ներկա է եղել բոլոր դասերին և կատարել է ուսումնական ծրագրի բոլոր պահանջները: Ընդ որում՝ դասախոսը կարող է նշանակել այդ ստուգարքը նաև այն դեպքերում, երբ ուսանողը բաց է թողել այդ առարկայի գործնական պարապմունքների որոշ մասը, եթե համոզված է, որ ուսանողը ձեռք է բերել բավարար գործնական ունակություններ: Այլ պարագայում ուսանողը պետք է լրացնի բաց թողած բոլոր դասաժամերը: Աջակողմյան բոլոր ստուգարքները հանձնողները թույլատրվում են քննության:



# ՄՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԸ



## ՏԵՂՅԱԿ ԵՂԻՐ ՄՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ, ՈՐ ՀԵՏՈ ՉԱՍԵՄ՝ «ՉԳԻՏԵԻ...»

- Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ռեկտորի հրամանով սահմանվում է տվյալ կիսամյակում նախատեսված քննությունների երկու մարման շրջանների ժամանակացույց:
- Ուսանողին թույլատրվում է մասնակցել ստուգարքներին և քննություններին, եթե նա հանձնել է տվյալ կիսամյակի՝ ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր աջակողմյան ստուգարքները:
- Ստուգարք ստանալու համար ուսանողը պարտավոր է ստանալ «կատարողականը»՝ հավաքելով անհրաժեշտ կրեդիտները և հանձնել կիսամյակի ընթացքում նախատեսված հարցումները: Հարցումները չհանձնած ուսանողին հնարավորություն է ընձեռվում ստուգարքը վերահանձնել մարման շրջաններում:

## ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՔԵԶ, ԵԹԵ ՈՒՆԵՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Կատարողականը ստանալու համար ուսանողը պարտավոր է կիսամյակի ընթացքում մասնակցել դասախոսություններին և գործնական (սեմինարներ, լաբորատոր) պարապմունքներին:

Ուսումնական պլանով նախատեսված կրեդիտներն ուսանողին տրվում են կիսամյակի ընթացքում դասախոսություններին, գործնական կամ ցիկլային պարապմունքներին մասնակցելու և ստուգարքներն ու քննությունները հանձնելու դեպքում: Ոչ ցիկլային կերպով ուսումնասիրվող յուրաքանչյուր առարկային հատկացված ժամաքանակի 15%-ից ավելի բացակայության դեպքում ուսանողի կողմից ուսումնական ծրագիրը համարվում է չկատարված, չի թույլատրվում ստուգարքներին ու քննություններին և ներկայացվում է համալսարանից հեռացման:

Ոչ ցիկլային կերպով ուսումնասիրվող առարկայից կամ առարկաներից գումարային 36-56 ժամ անհարգելի բացակայության դեպքում ուսանողին դեկանի կարգադրությամբ հայտարարվում է նկատողություն, 58-70 ժամի դեպքում՝ նկատողություն է տրվում ռեկտորի կողմից, իսկ 72 ժամից ավելի բացակայության դեպքում՝ ներկայացվում է համալսարանից հեռացման:

Ռազմաթշկական ֆակուլտետի կուրսանտները կիսամյակի ընթացքում ինչպես ցիկլային, այնպես էլ ոչ ցիկլային պարապմունքներից 30 ժամ անհարգելի բացակայելու դեպքում ներկայացվում են համալսարանից հեռացման:

Ռազմաթշկական ֆակուլտետի կուրսանտները կիսամյակի ընթացքում ինչպես ցիկլային, այնպես էլ ոչ ցիկլային պարապմունքներից 30 ժամ անհարգելի բացակայելու դեպքում ներկայացվում են համալսարանից հեռացման:

Ոչ ցիկլային պարապմունքներից բաց թողնված դասաժամերը չեն լրացվում:

Ցիկլային կերպով ուսումնասիրվող առարկայից կամ առարկաներից գումարային մինչև 120 ժամ հարգելի բացակայության դեպքում ուսանողին հնարավորություն է տրվում բաց թողնված ժամերն ամբողջությամբ լրացնելու համալսարանի հաշվին՝ ըստ ռեկտորի հրամանով սահմանված ժամանակացույցի, իսկ մարման շրջաններում ուսանողը կարող է օգտվել քննությունը երկու անգամ հանձնելու իրավունքից:

Ցիկլային կերպով ուսումնասիրվող առարկայից կամ առարկաներից գումարային մինչև 120 ժամ անհարգելի բացակայության դեպքում ուսանողին հնարավորություն է տրվում ամբողջությամբ լրացնելու բաց թողնված ժամերը վճարովի սկզբունքով՝ ըստ ռեկտորի հրամանով սահմանված ժամանակացույցի, իսկ մարման շրջաններում ուսանողը կարող է օգտվել քննությունը երկու անգամ հանձնելու իրավունքից:

Ավարտական կուրսերում 2-րդ

կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված առարկայից կամ առարկաներից գումարային մինչև 120 ժամ հարգելի բացակայության դեպքում ուսանողին հնարավորություն է տրվում մինչև ամփոփիչ ատեստավորման երկրորդ փուլի սկիզբը՝ կիսամյակի ընթացքում, դեկանի կողմից սահմանված ժամանակացույցով ամբողջությամբ լրացնելու բաց թողնված ժամերը համալսարանի հաշվին և օգտվել քննությունը երկու անգամ հանձնելու իրավունքից:



Ավարտական կուրսերում 2-րդ կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված առարկայից կամ առարկաներից գումարային մինչև 120 ժամ անհարգելի բացակայության դեպքում ուսանողին հնարավորություն է տրվում մինչև ամփոփիչ ատեստավորման երկրորդ փուլի սկիզբը՝ կիսամյակի ընթացքում, դեկանի կողմից սահմանված ժամանակացույցով ամբողջությամբ լրացնելու բաց թողնված ժամերը վճարովի սկզբունքով և օգտվել քննությունը երկու անգամ հանձնելու իրավունքից:

Ուսումնական պլանով նախատեսված երկու և ավելի առարկայական բաղադրիչից կազմված առարկայից բացակայած ուսանողը լրացնում է միայն տվյալ բաղադրիչը:






# ՄՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԸ

- I-III կուրսերում դասավանդվող առարկաների հարցումները և ստուգարքները անցկացվում են նշանակված օրերին՝ գրավոր, թեստային եղանակով: Բակլավորիատի և մագիստրատուրայի միայն մասնագիտական առարկաների քննություններն անցկացվում են թեստերով՝ համակարգչային եղանակով, իսկ հիմնական մասնագիտական առարկաների քննությունները կազմակերպվում են բանավոր եղանակով: Վերջնական գնահատականը ձևավորվում է տարեկան (հանձնած հարցումների միջին գնահատական) և քննական գնահատականների միջինից:
- **Քննություններից «անբավարար» գնահատական ստանալու դեպքում տարեկան գնահատականը հաշվի չի առնվում:**
- Ուսանողը պարտավոր է յուրաքանչյուր կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված քննությունները և ստուգարքները հանձնել համապատասխան առարկաների դասընթացներն ունկնդրելուց հետո:
- Քննությունները և ձախակողմյան ստուգարքներն անցկացվում են միայն թեստերով՝ գնահատման 10 միավորանոց համակարգով:
- Կիսամյակի ընթացքում ձախակողմյան ստուգարքային առարկայից ուսանողը պետք է հանձնի 1 հարցում: Ուսանողը ստանում է ձախակողմյան ստուգարքը՝ հար-

- ցումից դրական գնահատական ստանալու դեպքում:
- Հարցման (տարբերակը բաղկացած է 50 հարցից) գնահատականը ձևավորվում է՝ ճիշտ պատասխանած հարցերի քանակը բազմապատկելով 0.2-ով: Հարցման և կիսամյակային գնահատականները չեն ամբողջացվում: Օրինակ՝ 1-ին հարցում ( $46 \times 0.2 = 9.2$ )  
2-րդ հարցում ( $43 \times 0.2 = 8.6$ )  
Գ կիսամյակ = (Գ1-ին հարցում + Գ 2-րդ հարցում) : 2  
Գ կիսամյակ =  $(9.2 + 8.6) : 2 = 17.8 : 2 = 8.9$
- Քննական (տարբերակը բաղկացած է 100 հարցից) գնահատականը ձևավորվում է՝ ճիշտ պատասխանած հարցերի քանակը բազմապատկելով 0.1-ով:  
Օրինակ՝  $95 \times 0.1 = 9.5$
- Վերջնական գնահատականը ձևավորվում է կիսամյակային և քննական գնահատականների միջինացումից: Այս դեպքում արդյունքն ամբողջացվում է՝  
Գ վերջնական =  $(Գ կիսամյակ + Գ քննական) : 2$   
Օրինակ՝ Գ վերջնական =  $(8.9 + 9.5) : 2 = 9$
- 50 հարցից բաղկացած քննական տարբերակների դեպքում գործում է հաշվարկի հարցումային տարբերակը:

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԱԳԻՄՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՆՔՆԵՐՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մրցույթն անցկացնելու համար ստեղծվում է մանդատային հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են համալսարանի ուսումնական աշխատանքների զծով պրոռեկտորը, ուսումնական վարչության պետը, ֆակուլտետների ղեկավարները, ուսանողական խորհուրդների նախագահները՝ ի պաշտոնե, ինչպես նաև՝ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Մրցույթն անցկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:



**Մրցույթի առաջնահերթ պայմաններն են՝**

- մեկ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն: Հավասար միավորների դեպքում՝ հաշվի է առնվում նախորդ ուսումնական տարվա առաջադիմությունը:

**Մրցույթի լրացուցիչ պայմաններն են՝**

- տպագրված գիտական աշխատանքներ, կարդացված զեկուցումներ, ռեֆերատներ:

# ՃԱՆԱԶԻՐ ՔՈ



## ԻՐԱՎՈՆՔՆԵՐՆ

ՈՒ

## ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՆՆԵՐԸ

### դու իրավունք ունես...

- Ընտրել և ընտրվել համալսարանի (ֆակուլտետի) խորհուրդներում:
- Համալսարանական կազմակերպությունների միջոցով (ուսանողական խորհրդարան, արհմիություն և այլն) մասնակցել համալսարանի գործունեության կարևորագույն խնդիրների, ուսանողությանն առնչվող հարցերի լուծմանը:
- Անվճար օգտվել համալսարանի գրադարանի, ուսումնական, գիտական, սպորտային և մյուս ստորաբաժանումների տարածքներից, ունեցվածքից:
- Մասնակցել ուսանողական գիտական աշխատանքներին:
- Դեկանատի համաձայնությամբ՝ ուսումնական պլանի սահմաններում՝ խոսքը վերաբերում է էլեկտիվ առարկաներին, որոշել դասավանդվող առարկաների ցանկը՝ ըստ մասնագիտությունների:
- Լրացուցիչ հաճախել համալսարանում անցկացվող ցանկացած ուսումնական պարապմունքի, հարց բարձրացնել փոխելու այն դասախոսներին, ովքեր չեն ապահովում բարձրորակ ուսումնական պարապմունքներ:

### դու պարտավոր ես...

- Խորությամբ ու բազմակողմանիորեն տիրապետել ընտրած մասնագիտության տեսական գիտելիքներին, գործնական հմտություններին և հետազոտությունների ժամանակակից եղանակներին:
- Պարտադիր հաճախել գործնական պարապմունքներին:
- Սահմանված ժամկետներում կատարել ուսումնական պլաններով և ծրագրերով նախատեսված բոլոր առաջադրանքները:
- Մշտապես ձգտել ընդհանուր մակարդակի բարձրացման, ֆիզիկական և բարոյական կատարելագործման:
- Խստորեն ենթարկվել համալսարանի ներքին կարգապահության կանոններին:
- Խնամքով վերաբերվել համալսարանի ունեցվածքին, ճիշտ օգտվել կառույցներից, սարքավորումներից, շենքերից, տնտեսել նյութական միջոցները:



## Գրադարանից և ընթերցասրահներից օգտվելու կարգը



Սիրելի ուսանողներ, մի մոռացե՛ք, որ միայն դուք չեք օգտվում դասագրքերից, այն պետք է փոխանցվի ձեզանից հետո եկողներին, ուստի աշխատեք չվնասել, չկորցնել, չպատռել՝ հակառակ դեպքում ստիպված կլինեք հատուցել:

Դասագրքերը տրվում են ուսումնական ծրագրերին համապատասխան, մինչև առարկայի ավարտը: Ժամանակին չվերադարձնելու դեպքում նոր գիրք չեք կարող ստանալ:

**Գիրքը կորցնելու կամ վնասելու դեպքում** ձեզանից կպահանջվի նույն գրքից կամ գրադարանին անհրաժեշտ համարժեք գիրք:



Կարող եք օգտվել նաև ընթերցասրահի ծառայություններից, որտեղ դասագրքերից, տեղեկատու հրատարակություններից բացի կարող եք պատվիրել լրացուցիչ գրականություն:

Ընթերցասրահում սպասարկումը կատարվում է ուսանողական նույնականացման քարտերով (ID քարտերով), չի թույլատրվում գրքերը դուրս տանել:

Մի՛ մոռացեք, որ ընթերցասրահում պարտավոր եք՝

- պահպանել լռություն,
- անջատել բջջային հեռախոսները,
- քննարկումներ չանցկացնել:

Ընթերցասրահը ժամադրավայր չէ:



# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Համալսարանում ուսումնական պարապմունքներն անցկացվում են դասացուցակով՝ ուսումնական ծրագրերին համաձայն: Ուսումնական դասացուցակը կազմվում է կիսամյակի համար և փակցվում է ոչ ուշ, քան յուրաքանչյուր կիսամյակի սկսվելուց տաս օր առաջ: Յուրաքանչյուր ուսումնական պարապմունքից առաջ (և պարապմունքների ընդմիջման ժամանակ) լսարաններում, լաբորատորիաներում և կաբինետներում լաբորանտներն ու ասպիրանտները նախապատրաստում են ուսումնական պիտույքներն ու սարքավորումները:

Ուսումնական գործնական պարապմունքներն անցնելու համար յուրաքանչյուր կուրս բաժանվում է խմբերի:


Յուրաքանչյուր խմբում ուսանողներից **դեկանի կարգադրությամբ** նշանակվում է խմբի կազմակերպիչ: Խմբի

կազմակերպիչն անմիջականորեն ենթարկվում է ֆակուլտետի դեկանին և խմբում իրագործում է վերջինիս բոլոր հրահանգներն ու ցուցումները:

Հարգելի պատճառով պարապմունքներին չներկայանալու դեպքում ուսանողը պարտավոր է ոչ ուշ, քան հաջորդ օրը, տեղյակ պահել ֆակուլտետի դեկանին և ուսումնական հաստատությունն ներկայանալու առաջին իսկ օրը ներկայացնել փաստարկներ՝ պարապմունքները բաց թողնելու պատճառների մասին: Հիվանդության դեպքում ուսանողը ֆակուլտետի դեկանին ներկայացնում է սահմանված ձևի տեղեկանք՝ համապատասխան բուժական հիմնարկից:

Դասախոսի լսարան մտնելու ժամանակ ուսանողները պարտավոր են ոտքի կանգնել:

Ուսանողները պարտավոր են խնամքով և հոգատարությամբ վերաբերվել համալսարանի ունեցվածքին:



## ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

Բարձր առաջադիմության և համալսարանի հասարակական կյանքին ակտիվ մասնակցության համար սահմանվում են ուսանողների խրախուսման հետևյալ միջոցները՝

- ա) շնորհակալության հայտարարում,
- բ) անվանական կրթաթոշակի նշանակում,
- գ) պարգևատրում:



## ՏՈՒՅԺԵՐ

Ուսումնական կարգապահության, ներքին կարգ ու կանոնի խախտման դեպքում ուսանողների նկատմամբ կիրառվում են հետևյալ տույժերը՝

- ա) դիտողություն,
- բ) նկատողություն,
- գ) խիստ նկատողություն,
- դ) մասամբ կամ ամբողջապես կրթաթոշակներից զրկում՝ որոշակի ժամկետով,
- ե) վտարում:

## ԱՌԱՋԻՆ ԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՂ

• Համալսարանում և հատկապես լսարանների մոտ արգելվում է աղմկել, բարձր խոսել, դասերի ժամանակ անհարկի անցուդարձ անել, բացել լսարանների դռները:



• Դասերի ժամանակ բջջային հեռախոսները պետք է անջատվեն: Խիստ արգելվում է դասերի ժամանակ բջջային հեռախոսով խոսել կամ այլ կերպ օգտագործել, ինչպես նաև՝ այն դնել լսարանի տեսանելի վայրում:

• Քննությունների ընթացքում արգելվում է օգտվել բջջային հեռախոսից կամ արտաքին կապ ապահովող տեխնիկական այլ միջոցներից:



Մեզ մոտ չեն ծխում:



Մեկընդմիջտ հիշեցե՛ք՝ լսարաններում, միջանցքներում, գրադարանում, ընթերցասրահներում, հանրակացարաններում, համալսարանական կլինիկաներում ձեր ծխելը նկատվելու դեպքում կարող եք հեռացվել համալսարանից: Ճակատագրական մի դարձրե՛ք այդ վատ սովորությունը: Առավել ևս, որ պատրաստվում եք բժիշկ դառնալ, իսկ ծխելն անհարիր է ձեր ընտրած մասնագիտությանը:

# ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԻԹԱԹՈՇԱԿ



Ուսումնառության ընթացքում գերազանց առաջադիմություն, հասարակական բարձր ակտիվություն ու պատշաճ վարքագիծ ունեցող ուսանողների համար համալսարանում սահմանվում են Մխիթար Չերացու, Վահան Արծրունու, Զակոբ Չովհաննիսյանի, Լևոն Չովհաննիսյանի, Գրիգոր Արեշյանի, Ռուբեն Յոլյանի, Բարդուղիմեոս Ֆանարջյանի, Լևոն Օրբելու անվան կրթաթոշակներ:



Մխիթար Չերացու անվան հավակնորդ կարող են լինել բացարձակ գերազանց առաջադիմությամբ, վարկանիշային առաջին երեք տեղը զբաղեցրած ուսանողները: Կրթաթոշակի չափ սահմանել ամսական 45.000 դրամ:

Մնացած անվանական կրթաթոշակների հավակնորդ կարող են լինել բարձր առաջադիմությամբ ուսանողները՝ ելնելով տվյալ կուրսի վարկանիշային ցուցանիշերից (լավ գնահատականների քանակը չպետք է գերազանցի

3-ը): Կրթաթոշակի չափ սահմանել ամսական 30.000 դրամ: Անվանական կրթաթոշակի հավակնորդների մրցույթի համար սահմանել հետևյալ չափորոշիչները. գերազանց առաջադիմություն (քննական առարկաների գնահատականի ընդհանուր գումար), ամբիոնի պլանային գիտական աշխատանքների շրջանակում տպագրված գիտական աշխատանքներ, օտար լեզվի իմացություն (մրցույթին թույլատրվում են միայն օտար լեզվի քննությունից առնվազն լավ գնահատական ստացած ուսանողները), մասնակցություն առարկայական հանրապետական, միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, մասնակցություն ֆակուլտետների, համալսարանի ուսանողական, հասարակական աշխատանքներին, համապատասխան կուրսի երաշխավորությամբ մրցույթին մասնակցելու թույլտվություն:

Անվանական կրթաթոշակառուների մասին կարդա 10-14-րդ էջերում:

## Դու տեղյա՞կ ես համալսարանի ուսանողների ներքին կարգապահական և ուսուցման ընդհանուր կանոններին: Եթե ոչ՝ մենք կօգնենք քեզ



Համալսարանի և ուսանողի միջև հարաբերությունները կարգավորվում են օրենսդրության համաձայն կնքված պայմանագրով: Ֆակուլտետների ղեկանատները և բաժինները, մինչև ուսանողի հետ պայմանագրի կնքումը, ծանոթացնում են գործող կանոնակարգին, համալսարանի այլ կանոններին, օրենսդրությամբ սահմանված ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման կարգին, ինչպես նաև՝ ուսանողի իրավունքներին և պարտականություններին:

## Ներկա, բացակա, ուղացում...



Ուսուցման կանոնների նկատմամբ անմիջական վերահսկողություն իրականացնում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, ֆակուլտետների ղեկանները և բաժնի պետերը: Ուսանողները դասերին պետք է ներկայանան սահմանված ժամանակին: Ուղացման դեպքում ուսանողը մատյանում պետք է ստանա «բացակա»:

Դասերի ժամանակ լսարանից դուրս գալ ուսանողը կարող է միայն դասախոսի թույլտվությամբ:

Ուսանողի բացակայությունները համարվում են հարգելի, եթե ներկայացվում են համապատասխան փաստաթղթեր:

Ուսանողները դասերին հաճախում են բժշկական խալաթներով:





# Ցանկանում ես կրթաթոշակ ստանալ, ուրեմն՝ իմացիր...

## Գիտե՞ս՝ ի՞նչ է նշանակում ռոտացիա

Ուսման վարձի փոխհատուցման նպաստի համակարգում ընդգրկվելու համար (վճարովի համակարգից անվճար համակարգ անցնելը) ուսանողը պարտավոր է ուսումնական ծրագրով սահմանված ստուգարքները և քննությունները հանձնել միայն քննաշրջանի ընթացքում: Մարման շրջաններում ստուգարքներ և քննություններ հանձնած՝ անկախ ստացած զնահատականից, ուսանողը չի մասնակցում ուսման վարձի փոխհատուցման նպաստի մրցույթին:

Առաջին կուրս ընդունված ուսանողի նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է ՀՀ պետական ԲՈՒՀ-երի ընդունելության կանոններով սահմանված կարգով համալսարան ընդունված ուսանողներից: Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով: Պետության կողմից տրվող ուսման վճարի լրիվ փոխհատուցման նպաստների քանակը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից, որը տեղափոխվում է կուրսից կուրս:

Ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար: Պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանում է ՀՀ կառավարությունը:



Համալսարանի դասախոսները ուսանողների նկատմամբ դրսևորում են օբյեկտիվ, հարգալից, ուշադիր և բարեկիրթ մանկավարժական վերաբերմունք: Ուսանողները համալսարանի դասախոսների և այլ աշխատողների նկատմամբ ցուցաբերում են հարգալից վերաբերմունք, ճշտապահություն ու հանդուրժողականություն, ինչպես նաև՝ քաղաքավարի վարքագիծ:



Այս կանոնների շրջանցումը դիտվում է որպես կարգապահական կանոնների կոպիտ խախտում:



### ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 1716-Ն որոշմամբ՝ ղեղագիտական ֆակուլտետի 1-ին կուրսի վճարովի համակարգի ուսանողուհի Արփինե Անդրանիկի Ալոյանին 2014թ. սեպտեմբերի 23-ից հեռացնել համալսարանից՝ ներքին կարգապահական կանոնակարգի կոպիտ խախտման՝ իր փոխարեն քննության Հասմիկ Մնացականի Ամիրյանին ուղարկելու համար:

Ղեղագիտական ֆակուլտետի 2-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանողուհի Հասմիկ Մնացականի Ամիրյանին 2014թ. սեպտեմբերի 23-ից հեռացնել համալսարանից՝ ներքին կարգապահական կանոնակարգի կոպիտ խախտման՝ Արփինե Անդրանիկի Ալոյանի փոխարեն քննության ներկայանալու և քննությունը հանձնելու փորձ կատարելու համար:

Այս մասին մենք քեզ տեղեկացրել ենք նաև նախորդ համարում



# ԶԳՈՒՇԱՅԻՐ ԾԽԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ԶՂԵՌԱՅՎԵՍ

Իմացիր նաև...

Համալսարանի տարածքում արգելվում է ծխել: Արգելվում է համալսարանում օգտագործել ոգելից խմիչքներ, բացառությամբ համալսարանի ղեկավարության կողմից միջոցառումների համար նախատեսված դեպքերի: Կարգապահական կանոնների կոպիտ խախտում է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործող նյութերի ազդեցությամբ համալսարանում գտնվելը: Սույն կանոնակարգով սահմանված կարգապահական կանոնները խախտելու դեպքերը, ինչպես նաև համալսարանում այն գործողությունները, որոնք զուգորդվում են հակահրավակական արարքներով, պետք է կանխվեն համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից, իսկ մեղավորները ենթակա են պատասխանատվության:

Օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները չկատարելու կամ խախտելու դեպքում աշխատողի և ուսանողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ դիտողություն, նկատողություն, խիստ նկատողություն, համալսարանից հեռացում:



## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

Համալսարանի աշխատողները և ուսանողները բարեխիղճ օգտագործում և պահպանում են համալսարանի գույքը, սարքավորումները և այլ ունեցվածքը՝ իրենց բոլոր պատկանելիքներով, հատուցում են իրենց մեղքով պատճառած վնասները: Անվտանգության բաժնի աշխատողներն իրավունք ունեն ուսանողներից և աշխատողներից պահանջելու պահպանել համալսարանի անվտանգության կանոնները, անհրաժեշտության դեպքում ստուգելու աշխատողների վկայականները և ուսանողների ID քարտերը: Համալսարանի տարածքում ուսանողները



պարտավոր են ունենալ ID քարտ: Համալսարանի ուսանողները և աշխատողները պարտավոր են ենթարկվել համալսարանի անվտանգության կանոններին, անվտանգությունից թելադրվող դեպքերում ենթարկվել անվտանգության աշխատողների ցուցումներին, աշխատանքային օրվա ավարտից հետո և աշխատանքային օրվա ընթացքում սենյակից կամ լսարանից ժամանակավոր բացակայելու դեպքում անջատել լամպերը և մյուս էլեկտրասարքերը, փակել պատուհանները և կողպել, ծանոթանալ համալսարանի անվտանգության կանոններին: Ոչ աշխատանքային օրերին մուտքը համալսարան արգելվում է:



### Հանրակացարան

Անհրաժեշտության դեպքում համալսարանը ուսանողին տրամադրում է հանրակացարան: Հանրակացարանում բնակվելու պայմանները սահմանվում են համապատասխան պայմանագրով: Ուսանողի կողմից հանրակացարանում բնակվելու մասին պայմանագիրը միակողմանի լուծարելու և ուսանողի՝ համալսարանից կամ հանրակացարանից հեռացնելու դեպքում տվյալ ուսումնական տարվա վճարված բնակության վարձը չի վերադարձվում, բացառությամբ առողջական վիճակի պատճառով ուսումնա ընդհատվելու դեպքի:



# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՅՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԿԱՐԳԸ

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՅՈՒՄ (ԱԶԱՏՈՒՄ)

### • Ուսանողը կարող է ազատվել համալսարանից

- ա) իր դիմումի համաձայն,
- բ) այլ ԲՈՒՀ տեղափոխվելու կապակցությամբ:

### • Ուսանողը կարող է հեռացվել համալսարանից

- ա) ուսման վարձը սահմանված ժամկետում չվճարելու պատճառով,
- բ) անբավարար ակադեմիական առաջադիմության պատճառով,
- գ) մեծաթիվ անհարգելի բացակայությունների դեպքում,
- դ) համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու դեպքում:  
ԲՈՒՀ-ից ուսանողի ազատման հրամանն իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման:

### • Ուսանողի ուսումնառությունը դադարեցվում է

- ա) զինվորական ծառայության անցնելու կապակցությամբ՝ գորացրվելուց հետո ուսանողական իրավունքների վերաբերյալ վերականգնման իրավունքով,
- բ) առողջական վիճակի պատճառով՝ բժշկափորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա ակադեմիական արձակուրդի ձևակերպմամբ, որն ավարտելուց հետո ուսանողը կարող է շարունակել ուսումը,
- գ) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքում:
  - ԲՈՒՀ-ից հեռացման հրամանները տրվում են քննաշրջանի ակադեմիական պարտքերի մարման արդյունքներն ամփոփելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին ուսանողը նախապես տեղեկացվում է:
  - ԲՈՒՀ-ից հեռացվելու (ազատվելու) դեպքում ուսանողի դիմումի համաձայն 3 աշխատանքային օրվա ընթացքում նրան տրվում է հեռացման (ազատման) հրամանի պատճենը, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը: ԲՈՒՀ-ի կողմից հաստատված ավարտական վկայականի պատճենը պահվում է ուսանողի գործում:

- Ընթացիկ «անբավարար» առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունված ուսանողների, իրավունք է վերապահվում մինչ ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնել առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը՝ վերահանձնելով առարկաները՝ ևս 2 անգամ կրկնելով դրանք:
- Ուսումնառությունն ընդհատած ուսանողները շարունակում են ուսանողական իրավունքները մինչև ուսումնառության ընդհատումը՝ ունեցած կարգավիճակը պահպանելով:
- Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից:
- Համալսարանից հեռացված (ազատված) արական սեռի ուսանողների վերաբերյալ հրամանները եռօրյա ժամկետում ներկայացվում են զինկոմիսարիատներ:
- Համալսարանից հեռացման հրամանները ձևակերպվում են ընթացիկ և եզրափակիչ ատեստավորումների, ստուգարքները հանձնելու, քննական և ակադեմիական պարտքերի մարման շրջանները ավարտելուց հետո, յոթօրյա ժամկետում: Հրամանը տալու մասին ուսանողին տեղեկացնելը պարտադիր է, բացառությամբ անհարգելի պատճառով բացակայության առկայության, որը հրամանի ձևակերպման գործընթացի կասեցման հիմք չէ:



# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ



- Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է՝ սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից:
- Ուսանողական իրավունքները վերականգնելու դիմումները ներկայացվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:
- Ուսումնական պլանների փոփոխության պատճառով առաջացած առարկայական տարբերությունները ուսանողը պետք է հանձնի ռեկտորի հրամանով հաստատված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:
- ԲՈՒՀ-ից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են ԲՈՒՀ-ի ռեկտորի հրամանով:
- Վերականգնվող ուսանողն ազատվում է նախկինում ուսումնասիրած և համապատասխան կրեդիտներ հավաքած առանձին առարկաների ուսումնական պարապմունքներից և ատեստավորումից: Ուսանողը պարտավոր է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է՝ ըստ ԲՈՒՀ-ում մասնագիտության համար գործող մեկ կրեդիտի արժեքի:
- ԲՈՒՀ-ը քննարկում է ուսանողի վերականգնման դիմումը և որոշում նրա ուսումնառության կուրսը և մյուս պայմանները կամ հիմնավորում է մերժելու մասին իր որոշումը:
- Արտասահմանցի ուսանողներին վերականգնելիս հաշվի են առնվում ուսանողի կարգավիճակի առանձնահատկությունները:
- Առարկայական տարբերությունները և ակադեմիական պարտքերը հանձնելուց հետո կցագրման հրամանը փոխարինվում է ուսանողի հրամանագրումով:
- Ջորակոչվելու կապակցությամբ և առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդ ձևակերպած ուսումնառությունն ընդհատած ուսանողները ուսումնառությունը շարունակում են այն պահից, որից ընդհատել են՝ անկախ ծրագրային տարբերությունների:
- Վճարովի համակարգում ուսանողների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո:
- ԲՈՒՀ-ից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են այն կիսամյակում, որից նրանք հեռացվել (ազատվել) են, եթե վերականգնման պահին առարկայական անհամապատասխանություններով



- պայմանավորված կրեդիտների գումարային քանակը չի գերազանցում 20 կրեդիտը: 20 կրեդիտը գերազանցելու դեպքում ուսանողին առաջարկվում է վերականգնվել նախորդ կիսամյակ, որի համար առարկայական անհամապատասխանությունների սույն կետում նշված պահանջը բավարարվում է, բացառությամբ առաջին կիսամյակի:
- ԲՈՒՀ-ից հեռացված ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքները առնվազն 1 կիսամյակ հետո:
  - Համալսարանից հեռացված ուսանողը վերականգնվում և շարունակում է ուսումը վճարովի սկզբունքներով:
  - Վերականգնված ուսանողի անձնական գործում պահվում են ուսանողի դիմումը, ակադեմիական տեղեկանքը, վերականգնման մասին հրամանի պատճենը, ԲՈՒՀ-ի հետ կնքած պայմանագիրը և միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը, ուսման վարձի վճարման անդորրագիրը, եթե ուսանողը վերականգնվել է վճարովի սկզբունքով:
  - Ռազմաթշկական ֆակուլտետից հեռացված և նույն ֆակուլտետում վերականգնվելու իրավունքը կորցրած նախկին կուրսանողը կարող է վերականգնվել համալսարանի որևէ ֆակուլտետում միայն վճարովի հիմունքներով՝ վճարելով նաև ռազմաթշկական ֆակուլտետում ուսանած բոլոր տարիների ուսման վարձը՝ տեղափոխված ֆակուլտետի համար սահմանված ուսման տարեկան վարձի չափով:
  - Անվճար սկզբունքով ուսուցումը կարող են շարունակել հետևյալ անձինք.
    - անվճար սկզբունքով ուսումնառվող ուսանողները, ովքեր վերականգնվել են առողջական վիճակի պատճառով ձևակերպած ակադեմիական արձակուրդը ավարտելուց հետո,
    - երկկողմանի ծնողազուրկ ուսանողները,
    - 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ ուսանողները,
    - հղի կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող ուսանողները, ովքեր մինչև վերականգնվելը սովորել են ուսուցման անվճար համակարգում,
    - զինժառանգությունից զորացրված այն ուսանողները, ովքեր մինչև զորացրվելը սովորել են ուսուցման անվճար համակարգում,
    - ՀՀ և ԼՂՀ պաշտպանության մարտերում վիրավորված ուսանողները կամ զոհված զինժառանգների և ազատամարտիկների ընտանիքի անդամները:
- Վճարովի սկզբունքով վերականգնված ուսանողներին ուսանողական կրթաթոշակ չի նշանակվում:

# ԵՊԲՅ-Ն 2014-16 ԹԹ. ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ԵՄ ՏԵՄՊՈՒՍԻ ՎԵՐԻՏԱՍ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԸ



## Tempus

Վերջերս Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում տեղի ունեցավ Տեմպուսի Վերիտաս ծրագրի մասնակիցների հերթական հանդիպումը, որը նվիրված էր ծրագրի ֆինանսական կառավարմանը,

մասնավորապես՝ ծրագրի համաֆինանսավորման հարցերին և ծրագրի մասնակիցների վարձատրության չափանիշներին:

Հանդիպման ավարտին հստակեցվեցին նաև կատարվելիք աշխատանքների վերջնաժամկետները:

Հիշեցնենք, որ Երևանի պետական բժշկական համալսարանը 2014-16թթ. հանդիսանում է ԵՄ Տեմպուսի Վերիտաս (Ձալքբուրգի սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում) ծրագրի համակարգողը:

## ՏԵՄՊՈՒՍ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԱՅՑԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2014-ի հունվարից մեկնարկել է «Կենսական գիտությունների և բժշկության բնագավառներում հեմատոլոգիայի ուսումնական ծրագրերի մշակում և տարածաշրջանային ուսուցողական հարթակի ստեղծում» Եվրամիության TEMPUS ծրագիրը, որտեղ որպես գործընկերներ ընդգրկված են նաև Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանն ու ՀՀ ԱՆ պրոֆ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնը:

Ծրագրի նպատակն է բարելավել հեմատոլոգիայի ուսուցումը Հարավային Կովկասի երկրներում՝ գործող ուսումնական ծրագրերի բարելավման, նոր ուսումնական ծրագրերի մշակման, տեխնիկական վերազինման, հեմատոլոգիայում գործող բուժման պրոտոկոլների և ստանդարտների արդիականացման և Եվրամիության ԲՈՒՀ-երում մասնագետների վերապատրաստման միջոցով: Ծրագրի ընդհանուր տևողությունը 36 ամիս է:

Ծրագրի շրջանակներում ԵՊԲՅ-ի արյունաբանության ամբիոնը և ՀՀ ԱՆ արյունաբանական կենտրոնը հյուրընկալեցին ծրագրի գործընկեր համալսարանների ներկայացուցիչներին Մեծ Բրիտանիայի՝ Վեսթմինսթերի, Իսպանիայի՝ Մուրսիայի, Իտալիայի՝ Ֆեռարայի, Վրաստանի՝ Թբիլիսիի պետական և Թելավիի համալսարաններից: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին ԵՊԲՅ արյունաբանության ամբիոնը և կրթական ծրագիրը, ՀՀ-

ում արյան ծառայությունը, արյունաբանական կենտրոնի ախտորոշիչ լաբորատոր ծառայությունները, ինչպես նաև արյունաբանների հայկական ասոցիացիայի գործունեությունը, նպատակներն ու համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ: Կատարված շրջային ընթացքում հյուրերը ծանոթացան արյունաբանության ամբիոնի աշխատանքին, կենտրոնի կլինիկական բաժանմունքներին, բուժման մեթոդներին և դիագնոստիկ հնարավորություններին:

«Կլոր սեղան» քննարկումների ընթացքում համատեղ քննարկվեցին արյունաբանության դասավանդման ծրագրում առաջարկվող փոփոխությունները, նոր ուսումնական ծրագրերի ներդրման, ինչպես նաև արտասահմանում հայ մասնագետների վերապատրաստման հնարավորությունները:

Այցի շրջանակներում հյուրերը հանդիպեցին նաև ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Սամվել Ավետիսյանի և միջազգային հարաբերությունների և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Երվանդ Սահակյանի հետ: Հանդիպման ընթացքում այլ հարցերի հետ մեկտեղ քննարկվեցին ԵՊԲՅ-ում իրականացվող կրթական բարեփոխումներն ու ծրագրի իրականացման փուլերին վերաբերող գործնական հարցեր:

## TEMPUS Project on modernizing Hematology education: partners visiting YSMU

The EU TEMPUS project on “Development of a curriculum and establishment of a regional training platform for hematology in life sciences and medicine” has started in January 2014, aiming at improvement of hematology teaching in Southern Caucasus through curriculum development, faculty training, purchasing equipment and developing unified treatment protocols. The project duration is 36 months. The Yerevan State Medical University and RA Hematology Center after Prof. Yeolyan are partners in the project consortium.

Within the frameworks of the project the representatives of project partner universities visited YSMU and Hematology Center in July 2014. YSMU Hematology department, Hematology Service in RA, Diagnostic services of Hematology center, as well as Armenian Hematology

Association were presented to the partners from the University of Westminster (UK), University of Ferrara (Italy), University of Murcia (Spain), Tbilisi State University (Georgia) and Telavi State University (Georgia). The participants visited YSMU hematology department, as well as clinical departments, diagnostic laboratory and blood bank of the Hematology center. Round-table discussions were held on curricular changes in hematology and trainings in EU partner universities.

The partners also had a meeting with YSMU Vice-rector on Educational Affairs, Prof. Samvel Avetisyan and Vice-rector on International Relations, Dr. Yervand Sahakyan. During the meeting the ongoing YSMU educational reforms and project implementation steps were discussed among other questions.

# «ԿԱՆԳ ԱՌԵՔ ԵՎ ՀԱՃՈՒՅՔ ՍՏԱՑԵՔ...»

Տոնինո Գուերա. իտալացի բանաստեղծ, գրող և սցենարիստ: 100-ից ավելի ֆիլմերի սցենարի հեղինակ է: Սցենարներ է գրել այնպիսի հանրահայտ ռեժիսորների համար, ինչպիսիք են Ֆեդերիկո ֆելինին, Միքելանջելո Անտոնիոնին, Անդրեյ Տարկովսկին, Լուկինո Վիսկոնտին, Ֆրանչեսկո Ռոզին, Թեոդորոս Անգելուպոլոսը և այլոք: Նրա սցենարներից շատերը համարվում են դասական գործեր: Ներկայացվել է Օսկարի՝ «Կազանովա», «Ամարկորդ» և «Ֆոտոխոշորացում» ֆիլմերի համար: Նրա սցենարով ֆիլմերը 8 անգամ ստացել են Կաննի կինոփառատոնի զլխավոր մրցանակը:

Աշխարհի գրեթե բոլոր անկյուններում եղած ու բարձր պարգևների արժանացած 92-ամյա Տոնինո Գուերայի կարծիքը Հայաստանի մասին, կարծում են՝ կհետաքրքրի ընթերցողներին:

Ա. Թ.



«Ձեր երկրում այնքան խտացված ժամանակ կա, որ տարածությունը լայնանում է, դեպի խորքերն է գնում: Ես տեսա բարձր լեռներում գտնվող ձեր վանքերը, զգացի, թե ինչպես են համեստ վանականները սեփական ձեռքերով քարերը փափկացրել ու եկեղեցիներ կառուցել: Նրանք ցանկացել էին մահից հետո թաղվել վանքի մուտքի մոտ, որպեսզի բոլոր ներս մտնողները քայլեն իրենց վրայով: Ես էլ քայլեցի ու զգացի, որ պատմությունը դեպի խորքերն ու դեպի վեր է ձգվում... Ես արդեն ծեր մարդ եմ, և յուրաքանչյուր ծեր մարդու նման, երբ պառկում եմ քնելու՝ վախի զգացում եմ ունենում ու սկսում եմ լավ բաների մասին հիշել: Հիմա, երբ պառկեմ քնելու՝ Հայաստանն եմ հիշելու: Մի մոռացեք, որ կա մի բան, որը երբեք չպիտի քնի, դա ձեր երևակայությունն է: Երևակայությունը պետք է միշտ լավ մարզավիճակում լինի: Մարզեք այն այնպես, ինչպես մարզում են մարմինը: Հայաստանը դարձավ իմ երևակայության մարզիչը, ես երկար ժամանակ բանաստեղծություններ չէի գրում, իսկ Հայաստանում՝ հենց հյուրանոցի իմ համարում, նորից սկսեցի գրել:

Մարդիկ հիմա հեռանում են գեղեցկությունից, երիտասարդները մտահոգված են փող աշխատելու, սեփական մարմինները գեղեցկացնելու

պրոբլեմներով, նրանք կոսմետիկ պրոցեդուրաներ են ընդունում, ֆիտնես են գնում: Ես կնախընտրեի, որ նրանք ավելի շատ ոչ թե մարմինը, այլ իրենց մտքերը կարգի բերեին: Բայց ես դա ժամանակավոր երևույթ եմ համարում, շուտով այդ անձրևը կվերջանա, ու կրկին արև դուրս կգա: Կյանքը միշտ հիանալի է:

Երջանկությունը հաճույքի պայթյուն է, իսկ արվեստի մարդու համար պայթյունից ավելի կարևոր են հանգիստն ու կենտրոնացած լինելը: Մարդը հասնում է հանգստության, երբ հեռանում է ցանկություններից: Բայց ես դեռ շատ ցանկություններ ունեմ: Եվ երջանկություն եմ զգում, երբ կարողանում եմ փոքր բացահայտումներ անել: Վերջերս ես, օրինակ, լիակատար երջանկություն զգացի, երբ գեղեցիկ մայրամուտ տեսա, երբ պարզեցի, որ կատվի աչքը կատարյալ ստեղծագործություն է, երբ եղա Ջերմուկում...

Եվ էլի շատ ու շատ բաներ կան, որոնք դեռ չեմ հայտնագործել... Որքան մոտենում է ծերությունը, մարդ այնքան շատ է հիշում մանկությունը, հիշողությունը հուշում է իրեն, որ այնպիսի ձյուն, որն ինքը մանուկ հասակում է տեսել, այլևս աշխարհում չկա, որ խատուտիկի արագ անհետացող թերթիկները հենց այն են, ինչ կյանքն է խորհրդանշում: Կյանքը

տոն է դառնում, եթե լավատեսորեն ես նայում, և դժոխք է դառնում, եթե փնթփնթում ես: Իմ այցելությունը Հայաստան՝ տոնով սկսվեց և տոնով ավարտվեց: Շնորհակալ եմ ձեզ, ես Իտալիա եմ վերադառնում լիցքավորված: Հայաստանը փոխեց ինձ, և ես հասկացա, որ դուք կարող եք աշխարհին տալ այդ կարևոր զգացողությունը, որը փոփոխություն է կոչվում: Ձեզ հարկավոր է միայն ուղիղ ավիաչվերթեր ապահովել՝ դեպի եվրոպա ու կարգի բերել ճանապարհները: Հայաստանի հրաշքները տարբեր անկյուններում են թաքնված, լավ կլինի, որ դրանք կապված լինեն իրար հետ, այդ ժամանակ ինձ նման երիտասարդ ու առույգ մարդկանց համար ավելի հեշտ կլինի դրանք տեսնել: Իսկ դուք գոնե մեկ-մեկ հայացք նետեք ձեր հայտնի հայրենակիցների՝ Սերգեյ Փարաջանովի ու Մարտիրոս Սարյանի աշխատանքների վրա: Նայելով Փարաջանովի երեվակայության պայթյուններին ու Սարյանի գունեղ կերպարներին՝ դուք կզգաք, որ հարկավոր է կանգ առնել, մտածել, վերացարկվել իրականությունից ու հաճույք ստանալ: Ես ցանկանում եմ նվեր անել Երևանին ու շատրվան նվիրել քաղաքի տարեդարձի առիթով...»:

# ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ



«Ուսանողական գարուն-2014-ի» ամենամեծ անակնկալը «Կոմիտաս» ազգային երաժշտախմբի բեմելն էր: Ազգային նվագարաններ, հայ երգի բարձրարվեստ կատարումներ... Խոստովանենք՝ ավելի հաճելի զգացողություն դժվար է պատկերացնել, քանի որ երիտասարդությունն ավելի շատ ձգտում է դեպի ոչ ազգայինը: Այս առիթով են մեր զրույցները երաժշտախմբի ղեկավար, ստոմատոլոգիական ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող Գոռ Հակոբ-

յան-Սարգսյանի (լուսանկարում աջից 4-րդը) և մեներգչուհի, ընդհանուր բժշկության 5-րդ կուրսի ուսանողուհի Արդա Դանիելյանի (ձախից 3-րդը) հետ: Հուսով են՝ հետագայում ևս հնարավորություններ կունենան շփվել այս նվագախմբի անդամների, նրա ղեկավարի հետ: Իսկ առայժմ երաժշտախմբին մաղթում են գեղեցիկ ելույթներ, հանդիսատեսի բուռն ծափահարություններ և սկսված գործը շարունակելու կամք ու վճռականություն:

